


7100

ՀԱՅԿ(Ե) Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

3K72

3-22

ՔԱՂԱՐԱՏ



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

2465-49

ЗКА 2 11114(0)14

3-22 XVIII here G of

[illegible]

(3' we by 9

von p 16178 1744

Tc-57 13/10/80

74-147 2/15/81

14 NOV 2009

20 JAN 2006

ՅԿՈՂ

Z-22

պր.

ՀԱՄԿ(Բ)Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

10—21 մարտի 1939 թ.

Գ Ե Տ Հ Ք Ա Տ

ԲԱՆԱԶԵՎԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1939



2465-49

РЕЗОЛЮЦИИ
XVIII СЪЕЗДА ВКП(б)
10—21 марта 1939

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

ՀԱՄԿ (Բ) Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ ՀԱՄԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՄԻԱԶՈՅՆ)

Լսելով և քննարկելով ընկեր Ստալինի հաշվետու զեկուցումը՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին, ՀամԿ(բ)Կ XVIII համագումարը վորոշում է.

1. Հավանություն տալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ֆազաֆական գծին և պրակտիկ աշխատանքին:

2. Հավանություն տալ ընկեր Ստալինի հաշվետու զեկուցմանը և առաջարկել բոլոր կուսկազմակերպություններին՝ իրենց աշխատանքում դեկավարվել ընկեր Ստալինի զեկուցման մեջ առաջադրված դրույթներով ու խնդիրներով:

14 մարտի 1939 թ.

**ՀԱՄԿ (Բ) Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈ-
ՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ**

(ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՄԻԱՁԱՅՆ)

Կենտրոնական վերստուգիչ Հանձնաժողովի
հաշվետվությունը հաստատել:

14 մարտի 1939 թ.

**ՀԱՄԿ (Բ) Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ
ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՀԱՄԿ (Բ) Կ ԴԵԼԵ-
ԳԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԿ. ՄԱ-
ՆՈՒԻԼՍԿՈՒ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ**

(ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՄԻԱՁԱՅՆ)

Լսելով և ֆննդակալելով Կոմիտեերնի Համկ(բ)Կ
դելեգացիայի հաշվետվությունը, Համկ(բ)Կ XVIII
համագումարը հավանություն է տալիս Կոմիտե-
երնի Համկ(բ)Կ դելեգացիայի ֆազաֆական գծին
և պրակտիկ աշխատանքին:

14 մարտի 1939 թ.

**ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ
(1938—1942 թ. թ.)**

**ՀԱՄԿ (Բ) Կ XVIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ
ԸՆԿ. Վ. ՄՈՂՈՏՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ**

(ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՄԻԱՁԱՅՆ)

**I. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՅԵՎ
ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Յերկրորդ հնգամյա պլանի (1933—1937 թ. թ.) հա-
ջող կատարման հետևանքով ԽՍՀՄ-ում լուծված է յերկ-
րորդ հնգամյակի հիմնական պատմական խնդիրը—վերջնա-
կանապես լիկվիդացիայի յեն յենթարկված բոլոր շահագոր-
ծող դասակարգերը, լիովին վոչնչացված են այն պատճառ-
ները, վորոնք առաջացնում են մարդու շահագործում՝
մարդու կողմից և հասարակության բաժանում շահագործող-
ների և շահագործվողների: Լուծված է սոցիալիստական
հեղափոխության ամենադժվարին խնդիրը՝ ավարտված է
գյուղատնտեսության կոլեկտիվացումը, վերջնականապես
ամրապնդվել է կոլտնտեսային կարգը: Մեր յերկրում «հիմ-
նականում իրականացված է կոմունիզմի առաջին ֆազը—
սոցիալիզմը» (Ստալին): Սոցիալիզմի հաղթանակն որենս-
դրականորեն ամրապնդված է ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրու-
թյան մեջ:

Արտադրական ֆոնդերի, արտադրության գործիքների
և արտադրական կառուցումների սոցիալիստական—պետա-
կան և կոոպերատիվ-կոլտնտեսային—սեփականությունը
յերկրորդ հնգամյակի վերջին կազմում էր մեր յերկրում
յեղած բոլոր արտադրական ֆոնդերի 98,7 տոկոսը: Արտա-

դրույթյան սոցիալիստական սիստեմը դարձել է անրաժանելիորեն տիրապետողը ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ. արդյունաբերության համախառն արտադրանքի գծով նա կազմում էր 99,8 տոկոս, գյուղատնտեսության համախառն արտադրանքի գծով, ներառյալ կոլտնտեսականների անձնական ու ժանդակ տնտեսությունը, — 98,6 տոկոս, ապրանքաշրջանառության գծով — 100 տոկոս:

Յերկրի եկոնոմիկայի՝ կատարված սոցիալիստական վերակառուցմանը համապատասխան փոխվել է նաև խորհրդային հասարակության դասակարգային ստրուկտուրան: ԽՍՀՄ-ի սոցիալիստական տնտեսության մեջ զբաղված բանվորները և ծառայողները յերկրի ամբողջ բնակչության կազմի մեջ 1937 թվականին կազմում էին 34,7 տոկոս. կոլտնտեսային գյուղացիությունը, կոոպերացված տնայնագործների հետմիասին — 55,5 տոկոս. բանակը, սովորողները, թոշակառուները և ուրիշները — 4,2 տոկոս: Այսպիսով, արդեն այն ժամանակ յերկրի բնակչության 94,4 տոկոսը զբաղված էր սոցիալիստական տնտեսության մեջ կամ սերտորեն կապված էր նրա հետ: Բնակչության մնացած մասը՝ մենատնտես-գյուղացիները, չկոոպերացված տնայնագործներն ու արհեստավորները կազմում էին բնակչության միայն 5,6 տոկոսը: Այն ժամանակվանից բնակչության այդ մասն էլ ավելի յե պահպանել:

Սոցիալիստական հասարակությունը ԽՍՀՄ-ում այժմ կազմված է միմյանց նկատմամբ բարեկամական յերկու դասակարգերից — բանվորներից և գյուղացիներից, վորոնց միջև, ինչպես նաև այդ դասակարգերի ու ինտելիգենցիայի միջև, սահմանազծերը ջնջվում են, աստիճանաբար տնհետանում: ԽՍՀՄ-ի աշխատավորները ճնշող մասսայով հանդիսանում են անդասակարգ սոցիալիստական հասարակության, կոմունիզմի ակտիվ ու գիտակից կառուցողներ: ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթանակը ապահովեց ժողովրդի ներքին բարոյական ու քաղաքական՝ առաջնորդում վոչ մի տեղ չտեսնված՝ միասնությունը, աշխատավորների բարոյական-քաղաքական միասնությունը կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության դրոշի տակ ու ղեկավարությամբ, միասնություն, վորն ընդու-

նակ է վոչ միայն վերջ դնելու թշնամական դասակարգերի մնացորդներին, նրանց խորթ ազդեցություններին և հակահարված տալու արտաքին ամեն տեսակ թշնամական վոտընդդույթյուններին, այլև հանդիսանում է մեր հայրենիքի հետագա աճման ու ծաղկման լավագույն յերաշխիքը, մեր յերկրում կոմունիզմի հաղթանակի յերաշխիքը:

2. Յերկրորդ հնգամյակի գլխավոր ու վճռողական տրետեսական խնդիրը — ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը — հիմնականում կատարված է:

Արմատապես նորոգվել է յերկրի արտադրական-տեխնիկական ապարատը: Արդյունաբերության ամբողջ արտադրանքի ավելի քան 80 տոկոսը 1937 թվականին ստացվել է նոր ձեռնարկություններից, վորոնք կառուցվել կամ ամբողջապես վերակառուցվել են առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում. գյուղատնտեսության մեջ գործող բոլոր տրակտորների ու կոմբայնների մոտավորապես 90 տոկոսը խորհրդային արդյունաբերությունն է արտադրել յերկրորդ հնգամյակում: Արդյունաբերության և տրանսպորտի բնագավառում յերկրորդ հնգամյակի առաջադրանքները կատարված են ժամկետից չուտ: Արդյունաբերությունը յերկրորդ հնգամյակը կատարել է սու 1-ն ապրիլի 1937 թվականի, այսինքն՝ 4 տարի ու 3 ամսում, ըստվորում յերկրորդ հնգամյակում ևս հատկապես արագորեն աճում էր ծանր արդյունաբերությունը: Յերկաթուղային տրանսպորտի փոխադրումների գծով յերկրորդ հնգամյակը գերազանցումով կատարված է 4 տարում: Գյուղատնտեսության արտադրանքի գծով՝ հացահատիկի գծով, բամբակի գծով նույնպես դերակատարված են յերկրորդ հնգամյակի կարևորագույն առաջադրանքները:

1932 թվականի — առաջին հնգամյակի վերջին տարվա — համեմատությամբ արդյունաբերության արտադրանքը 1937 թվականին աճել է 120,6 տոկոսով, մինչդեռ ըստ յերկրորդ հնգամյա պլանի առաջադրանքի աճ նախատեսվում էր 114 տոկոսով: Արդյունաբերության արտադրանքի աճի տարեկան միջին տեմպերը յերկրորդ հնգամյակում կազմում էին 17,1 տոկոս՝ պլանով նախատեսված 16,5 տոկոսի գիմաց:

ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աճել են արտադրական կադրեր, վորոնք հաջողությամբ են տիրապետում նոր տեխնիկային: Յերկրորդ հընգամյակի խոշորագույն հաղթանակն է հանդիսանում խորհրդային ինտելիգենցիայի, սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերի համար հարկավոր, բավականաչափ կադրերի ստեղծումը և նոր ղեկավար աշխատողների լայն առաջընթացը՝ կուսակցական և վոչ-կուսակցական բոլոր ժիլկներից, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում:

Նոր տեխնիկայի յուրացման բնագավառում ձեռք բերված հաջողությունները վառ արտահայտություն գտան ստախանովյան չարժման մեջ: Սոցիալիստական մրցություն և նրա բարձրագույն ձևի—ստախանովյան չարժման—ծավալումը հասցրեց աշխատանքի արտադրողականության հուժկու վերելքի՝ արդյունաբերության մեջ և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում: Աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության մեջ յերկրորդ հնգամյակի ընթացքում ավելացել է 82 տոկոսով՝ պլանով նախատեսված 63 տոկոսի դիմաց, իսկ շինարարության բնագավառում աշխատանքի արտադրողականությունն այդ ժամանակաշրջանում ավելացել է 83 տոկոսով՝ յերկրորդ հնգամյակի պլանով նախատեսված 75 տոկոսի դիմաց: Ստախանովյան չարժման վերելքը և ստախանովականների սոցիալիստականորեն դիտակցեց աշխատանքի բազմաթիվ հիանալի օրինակները՝ աշխատանքի արտադրողականության նրանց բարձր ցուցանիշների հետ՝ նախադրյալներ են ստեղծել աշխատանքային կարգապահությունն արմատապես ամրապնդելու համար մեր բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկներում, վորք բոլոր աշխատավորների աշխատանքի բարձր արտադրողականության անհրաժեշտ պայմանն է և ԽՍՀՄ-ում կոմունիզմի նոր հուժկու աճման դրավականը:

Յերկրորդ հնգամյա պլանի կատարումն ապահովելու համար անհրաժեշտ էր պայքար կազմակերպել թշնամի դասակարգային տարրերի մնացորդների դեմ, թշնամի դասակարգային ազդեցությունների դեմ՝ ժողովրդական տնտեսության մեջ, կուլտուրական շինարարության մեջ, ամբողջ բաղադրական կյանքում: Դրա համար անհրաժեշտ էր, ամեն-

նից առաջ, պայքար կազմակերպել հանուն սոցիալիստական, պետական և կոլտնտեսային սեփականության պահպանման ու ամրապնդման՝ ընդդեմ գողերի և պետեղան ու կոլտնտեսային բարիքը հափշտակողների, ընդդեմ դասակարգային թշնամու բոլոր ու ամեն տեսակ աշակերների և, մանավանդ, ընդդեմ ժողովրդի դավաճանների՝ հանձինս արոցկիստական-բուխարինական և բուրժուա-նացիտաշխատական լրտեսների, դիվերսանտների ու վնասարարների, վորոնք սերտաճել են ոտարերկրյա հետախուզությունների հետ, դարձել են Փաշիստական պահնորդական բաժինների գործակալները: Նրանց դավաճանական աշխատանքը լուրջ վնաս հասցրեց ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերում: Այդ լրտեսական-վնասարարական բանդանների ջախջախումը ճանապարհ մաքրեց մեր յերկրում սոցիալիստական տնտեսության հետագա ու ել ավելի հզոր հաջողությունների համար:

3. Յերկրորդ հնգամյա պլանով առաջադրված՝ աշխատավորների նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացման խնդիրը, ժողովրդական սպառման մակարդակի 2 անգամ և ավելի բարձրացումով, նույնպես կատարված է:

Բանվորների և ծառայողների թվական կազմը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում յերկրորդ հնգամյակի ընթացքում աճել է 17,6 տոկոսով: Բանվորների և ծառայողների տարեկան միջին աշխատավարձն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ 1937 թվականին՝ 1932 թվականի համեմատությամբ՝ աճել է 113,5 տոկոսով, այսինքն՝ ավելի քան 2 անգամ: Բանվորների և ծառայողների աշխատավարձի Փոխը՝ յերկրորդ հնգամյա պլանով սահմանված 55 տոկոս աճման փոխարեն՝ աճել է 151 տոկոսով, այսինքն՝ ավելացել է 2,5 անգամ: Բանվորների և ծառայողների կուլտուր-կենցաղային սպասարկման վրա կատարվող պետական ծախսերն (ըստ միութենական, հանրապետական ու տեղական բյուջեների), լուսավորության, առողջապահության, ֆիզկուլտուրայի ու սոցիալական ապահովագրության պետական ծախսերը, ինչպես և պետական սոցիալական ապահովագրության ծախսերը, 1932 թվականի 8,3 մի-

լիարդ ռուբլուց 1937 թվականին հասան 30,8 միլիարդ ռուբլու, այսինքն՝ ավելացան 3,7 անգամ:

Բացի դրանից, աշխատավորների բնակարանային-կենցաղային պայմանների բարելավման և կոմունալ տնտեսութան վրա պետության կատարած ծախսերը յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում կազմեցին 16,3 միլիարդ ռուբլի: Յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում զգալիորեն աճել և կոլտնտեսականների ունեւորութունը: Կոլտնտեսականների համախառն յեկամուտը 4 տարվա ընթացքում (1934—1937 թ. թ.) ավելացել և ավելի քան 2,7 անգամ, իսկ կոլտնտեսականների միջև ըստ աշխուրդի բաշխվող դրամական յեկամուտներն այդ տարիների ընթացքում ավելացել են 4,5 անգամ:

1937 թվականին լայն սպառման առարկաների արտադրութունը՝ 1932 թ. համեմատությամբ՝ աճել և ավելի քան 2 անգամ: Մի շարք կարևոր մթերքների և լայն սպառման իրերի գծով ձեռք ե բերվել արտադրության վուջ միայն կրկնապատկում, այլև յեռապատկում: Պետական-կոոպերատիվ ապրանքաշրջանառութունը յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում աճել և ավելի քան 3 անգամ, իսկ կոլտնտեսային առևտրի հետ միասին այն՝ 1932 թվականի 47,8 միլիարդ ռուբլուց 1937 թվականին բարձրացել և 143,7 միլիարդ ռուբլու: Լայն սպառման ապրանքների մանրածախ գների իջեցման գծով յերկրորդ հնգամյակի առաջադրանքների թերակատարումը ծածկված և բանվորների և ծառայողների աշխատավարձի չափերի՝ հնգամյակով նախատեսվածից զգալիորեն ավելի մեծ բարձրացումով, ինչպես նաև կոլտնտեսությունների և կոլտնտեսականների դրամական յեկամուտների կատարված զգալի ավելացումով:

Յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում ԽՍՀՄ-ում կատարված և իսկական կուլտուրական հեղափոխություն: Տարրական և միջնակարգ դպրոցում սովորողների թիվը 21,3 միլիոնից աճել և մինչև 29,4 միլիոն, ըստվորում 5—7-րդ դասարաններում սովորողների թիվը կրկնապատկվել և, իսկ 8—10-րդ դասարաններում սովորողների թիվն ավելացել և 15 անգամ: Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը բարձրացել և մինչև

550 հազար: Կուլտուրական շինարարությունը ծավալվել և նաև մյուս բոլոր ճյուղերում:

ԽՍՀՄ-ի բոլոր միութենական հանրապետություններում զգալի հաջողություններ են ձեռք բերվել ինդուստրիալ-գացիայի և բնակչության նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացման գործում, բուլշևիկյան ազգային կադրերի ուսեղծման, ամբողջ ազգային, բուլանդակությամբ սոցիալիստական, կուլտուրայի վերելքի գործում: Հատկապես մեծ էյին նյութական և կուլտուրական վերելքի տեմպերը խորհրդային Արևելքի ժողովուրդների մոտ:

4. Յերկրորդ հնգամյա պլանի հաղթական կատարման և սոցիալիզմի ձեռք բերված հաջողությունների հիման վրա, ԽՍՀՄ-ը յերրորդ հնգամյակում թեւակոխեց զարգացման նոր շրջան, անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը, յերբ վճռողական նշանակություն և ստանում աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործը, կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը մարդկանց՝ կոմունիզմ կառուցողների գիտակցության մեջ:

Ձի կարելի, սակայն, նվազեցնել այդ վիթխարի խնդրի լուծման դժվարությունները, մանավանդ թշնամական կապիտալիստական շրջապատման պայմաններում: Առավել ևս, վոր ջնայած առաջին ու յերկրորդ հնգամյակների հաջող կատարմանը, ջնայած մեր արդյունաբերության զարգացման ուկորդային տեմպերին, ջնայած այն բանին, վոր արտադրության տեխնիկայով ԽՍՀՄ-ի արդյունաբերությունն առաջ և անցել կապիտալիստական առաջավոր յերկրներից, — ջնայած այս ամենին, մենք տնտեսական տեսակետից դեռ ջնք հասել առավել զարգացած կապիտալիստական յերկրներին:

ԽՍՀՄ-ը դարձել և տնտեսապես անկախ յերկիր, վորն իր տնտեսությունը և պաշտպանության կարիքներն ապահովում և ամբողջ անհրաժեշտ տեխնիկական սպառազինմամբ: Իր զարգացման տեմպերով ԽՍՀՄ-ի արդյունաբերությունն աշխարհում առաջին տեղն և կանգնած: Մինչդեռ կապիտալիստական յերկրների արդյունաբերությունը, 1929 թվականի վերջին սկսված ամենածանր տնտեսական ճգնաժա-

մեջ հետո, 1937 թվականին հասել եր 1929 թ. մակարդակի. հաջորդ 102,5 տոկոսին, իսկ 1937 թ. յերկրորդ կեսից, նոր հղնաժամի հարվածների տակ, նորից զլորվել ե ցած,— **ԽՍՀՄ**—ի արդյունաբերությունը 1937 թվականին հասել եր 1929 թ. մակարդակի 428 տոկոսին, վորը մինչպատերազմյան մակարդակի համեմատությունը նշանակում ե արդյունաբերության արտադրանքի ավելացում ավելի քան 8 անգամ: 1938 թվականին **ԽՍՀՄ**—ի արդյունաբերության արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ ավելացավ դարձյալ 11,3 տոկոսով և հասավ 1929 թ. մակարդակի 477 տոկոսին,—այնինչ կապիտալիզմի յերկրներում 1938 թվականին արդյունաբերական արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել եր 13,5 տոկոսով և ընկել, հասնելով 1929 թ. մակարդակի 90 տոկոսին:

Կապիտալիզմին հակադիր, վորտեղ ըստ յերկրների դարդացման մեծ անհամաչափության պայմաններում վերջին տասնամյակի ընթացքում արդյունաբերության մեջ՝ ամբողջությամբ վերցրած՝ չի յեղել աճում, այլ կատարվել ե արդյունաբերական արտադրանքի նկատելի նվազում,—**ԽՍՀՄ**—ում մենք ունեյինք արդյունաբերության անչեղ ու արագ վերելք, տարեցտարի արդյունաբերական արտադրանքի անման բարձր տեմպեր: Սակայն, նկատի ունենալով, վոր անցյալում մեր յերկրը յեղել ե տնտեսական տեսակետից ծայրահեղորեն հետամնաց, **ԽՍՀՄ**—ի արդյունաբերության զարգացումն մակարդակը, բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող արտադրանքի չափերի իմաստով, այժմ ել դեռ զգալիորեն ցածր ե Յեվրոպայի և Ամերիկայի՝ տեխնիկա—տնտեսական տեսակետից առավել զարգացած կապիտալիստական յերկրներից: Հայտնի յե, վոր մեր յերկրում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում ե զգալիորեն ավելի քիչ քանակությամբ արդյունաբերական արտադրանք, քան այնպիսի յերկրներում, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան: Այսպես, որինակ, յերկրորդ հնդամյակի վերջին **ԽՍՀՄ**—ում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում եր երկարոնեքրիա՝ 2—ից ավելի անգամ պակաս, քան Ֆրանսիայում, մոտ 3 անգամ պակաս, քան Անգլիայում, 3,5

անգամ պակաս, քան Գերմանիայում, 5,5 անգամ պակաս, քան ԱՄՆ—ում. չուզում—2—ից ավելի անգամ պակաս, քան Անգլիայում ու Ֆրանսիայում, 2,5 անգամ պակաս, քան Գերմանիայում, 3 անգամ պակաս, քան ԱՄՆ—ում. պողպատ ընկնում եր համարյա 2 անգամ պակաս, քան Ֆրանսիայում, համարյա 3 անգամ պակաս, քան Անգլիայում ու Գերմանիայում, համարյա 4 անգամ պակաս, քան ԱՄՆ—ում. քարածուխ **ԽՍՀՄ**—ում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում եր մի փոքր պակաս, քան Ֆրանսիայում և զգալիորեն պակաս, քան ԱՄՆ—ում, Անգլիայում ու Գերմանիայում:

ԽՍՀՄ—ը բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող՝ արտադրանքի չափերի տեսակետից դեռևս հետ ե մնում նաև արդյունաբերական այնպիսի ապրանքների դժով, ինչպես դործվածքները, թուղթը, ռճառը և միջանի այլ ապրանքներ:

Տեխնիկա—տնտեսական տեսակետից առավել զարգացած կապիտալիստական յերկրների համեմատությամբ **ԽՍՀՄ**—ի արդյունաբերական արտադրանքի չափերի այդ անբավարարությունը պետք ե լիովին լիկվիդացիայի յենթարկվի, վորպեսպի ապահովվի կոմունիզմի վերջնական հաջողությունը կապիտալիզմի դեմ նրա պատմական մրցության մեջ:

5. Այժմ, յերբ **ԽՍՀՄ**—ը կազմավորվել ե վորպես սոցիալիստական պետություն, հիմնականում ավարտել ե ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը և արտադրության տեխնիկայի մակարդակով արդյունաբերության և դյուղատնտեսության մեջ կանդնած ե Յեվրոպայի ամեն մի կապիտալիստական յերկրից առաջ,—այժմ մենք կարող ենք և պետք ե ամբողջ հասակով պրակտիկ կերպով դնենք ու իրականացնենք **ԽՍՀՄ**—ի հիմնական տնտեսական խնդրի լուծումը—տնտեսական տեսակետից ևս հաղթել ու առաջ անցնել Յեվրոպայի առավել զարգացած կապիտալիստական յերկրներից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից, վերջնականապես լուծել այդ խնդիրն ամենամոտիկ ժամանակվա ընթացքում:

Դրա համար անհրաժեշտ ե ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական դեման հետագա զգալի

աճումը և, հետևապես, մեքենաշինության ու ամբողջ ծանր արդյունաբերության ամեն կերպ զարգացումը, արտադրության ամբողջ կադրակերպման ու տեխնոլոգիայի վճռական քարելավումը՝ լայնորեն արժատացնելով գերության նորագույն նվաճումներն ու հայտնաբերումները, արտադրական կադրերի քանակական ու, մասնավորապես, փորակական աճումը և տեխնիկայի բարձր յուրացումն արդյունաբերության մեջ, արանսպորտում ու դյուղատնտեսության մեջ: Լենինի այն ցուցումին համապատասխան, վոր «աշխատանքի արտադրողականության ղեկավարումը, դա, վերջին հաշվով, ամենակարևորն է, ամենադժվարն է նոր հասարակակարգի հաղթանակի համար», մենք պետք է ապահովենք սոցիալիստական մրցության և ստախանովյան շարժման ամեն կերպ ծավալումը, աշխատանքային կարգապահության անշեղ ամրապնդումը բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկներում, բոլոր կոլտնտեսություններում, մենք պետք է ապահովենք բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի աշխատանքի՝ սոցիալիստական հասարակակարգին արժանի բարձր արտադրողականությունը:

Դրա հետ միասին անհրաժեշտ է ապահովել ժողովրդական յեկամտի այնպիսի աճում և ապրանքաշրջանառության զարգացում, վորպեսզի յերրորդ հնգամյակի տարիների ընթացքում բարձրացնենք ժողովրդական սպառումը 1,5—2 անգամ: Դրա համար, ծանր և պաշտպանական ինդուստրիայի ուժեղ վերելքի հետ միասին, անհրաժեշտ է աշխատանք ծավալել լայն սպառման սպորանքների ու սննդամթերքների արտադրությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես նաև ապահովել բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձի համապատասխան աճման, կոլտնտեսականների յեկամուտների աճման հնարավորությունը:

Յերրորդ հնգամյակի այս հիմնական խնդիրներին համապատասխան, անհրաժեշտ է ապահովել քաղաքի և դյուղի աշխատավորների ամբողջ մասսայի կուլտուրական մակարդակի զգալի վերելքը, դեպի առաջ խոշոր քայլ կատարել բանվոր դասակարգի, սոցիալիստական հասարակության առաջավոր ու ղեկավար ուժի, կուլտուրական-տեխնիկական մակարդակն ինժեներա-տեխնիկական աշխատանքի աշխ-

տողների մակարդակին բարձրացնելու պատմական դործում:

Արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության վերխարի աճումը յերրորդ հնգամյակում և ընդհանուր-պետական պլանին համապատասխան նրա հետագա անընդմեջ վերելքն ապահովելու անհրաժեշտությունը, մասնավորապես խՍՀ Միության արտաքին շրջապատման մեջ իմպերիալիզմի ագրեսիվ ուժերի աճման պայմաններում, պահանջում են ստեղծել պետական խոշոր ռեզերվներ, ամենից առաջ վառելիքի, էլեկտրոնների գիտյի և միջանի պաշտպանական արտադրությունների գծով, ինչպես նաև տրանսպորտի զարգացման գծով, ճիշտ տեղադրելով այն ըստ յերկրի համապատասխան շրջանների, վերացնելով վոչ-արտադրողական ու հեռավոր փոխադրումները և յերկրի հիմնական տնտեսական ոլորտները տեղում ապահովելով առավելագույն քանակությամբ ռեսուրսներով:

ՀամԿ(բ)Կ XVIII համագումարը հաստատում է խՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման՝ խՍՀՄ-ի Պետական Պլանային, Հանձնաժողովի կողմից ներկայացված և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի ու խՍՀՄ-ի ժողովրդական Կոմիտեների խորհրդի կողմից ընդունված՝ յերրորդ հնգամյա պլանի հետևյալ առաջադրանքները:

II. ԱՐՏԱԴՐՈՒՅՑՆ ԱՃՍԱՆ ՊԼԱՆԸ ՅԵՐՐՈՐԴ շՆԳԱՄՅԱԿՈՒՄ

1. խՍՀՄ-ի ամբողջ արդյունաբերության արտադրանքի ծավալը 1942 թվականի՝ յերրորդ հնգամյակի վերջին տարվա համար սահմանել 184 միլիարդ ռուբլի (1926—1927 թ. թ. գներով)՝ 1937 թվականի 95,5 միլիարդ ռուբլու հանդեպ, այսինքն՝ յերրորդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի աճումը 92 տոկոսով:

խՍՀՄ-ի արդյունաբերական արտադրանքի աճման տարեկան միջին տեմպը յերրորդ հնգամյակի համար սահմանել 14 տոկոս, ընդվորում արտադրության միջոցների արտադրման տարեկան միջին աճը սահմանել 15,7 տոկոս, իսկ սպառման առարկաների արտադրության գծով՝ 11,5 տոկոս:

2. Յերրորդ հնգամյակի վերջի, այսինքն՝ 1942 թվա-

կանի համար սահմանել արդյունաբերության կարևորագույն մշտական արտադրանքի հետևյալ չափը.

	1942 թ.	1942 թ. % 0/0-ով 1937 թ. նկատմամբ
Ամբողջ արդյունաբերությունը (1936 27 թ. թ. գնեցով), միլիարդ ռուբլիներով	184	192
Այդ թվում՝		
արտադրության մեջ ունեցող տնտեսական	114,5	207
սպասարկող տնտեսական արտադրությունը	69,5	173
Մեքենայինություն և մեքենայի մշակում (1936 27 թ. թ. գնեցով), միլիարդ ռուբլիներով	63	229
Մագիստրալ շոգեքարշեր (փոխադրած պայմանական «Ճ» և «Կ» շոգեքարշերի (հատերով)	2.340	148
Ապրանքատար փողոցներ յերկաշինականներին հաղվող (հազար հատերով)	120	203
Ավտոմոբիլ (հազար հատերով)	400	200
Ելեկտրոններգիա (մլրդ. կիլովատ-ժամերով)	75	206
Բարածուխ (միլիոն տոններով)	243	190
Հում նավթ գազով,	54	177
Տորֆ,	49	206
Չուգուն,	22	152
Պողպատ,	28	158
Պրոկատ,	21	162
Այդ թվում բարձրորակ	5	199
Բեմական արդյունաբերություն (1936 27 թ. թ. գնեցով, միլիարդ ռուբլիներով)	14	237
Ցեմենտ (միլիոն տոններով)	11	202
Շինարարական փոխադրում (միլիոն խոր. մետրերով)	200	180
Ողողակայաններ (միլիոն խոր. մետրերով)	45	156
Թուղթ (հազար տոններով)	1.500	180
Բամբակեղեն գործվածքներ (մլն. մետրերով)	4.900	142
Բրդե գործվածքներ (միլիոն մետրերով)	177	167
Կաշվե կոշիկեղեն (միլիոն զույգերով)	258	143
Շաքարավաղ (հազար տոններով)	3.500	144
Կոնսերվ (Մանրագործական, Զինարագործական, Տեղաբնակչական) (միլիոն տոն-փերով)	1.800	206
Մետաղե կոնսերվացիաներ (հազար տոններով)	900	161

3. Ըստամենայնի գարգացնելով մեքենայինությունը, փորին առաջատար դեր և պատկանում ժողովրդական տնտեսության տեխնիկական սպառազինման տապարեղում, ապահովել առաջավոր տեխնիկայի արմատացումը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում և ԽՍՀՄ պաշտ-

պանություն բոլոր տեսակների համար՝ պետություն արդի պահանջներին համապատասխան: Մինչև յերրորդ հնդամյակի վերջը մեքենայինության արտադրանքն ավելացնել 2,3 անգամ, այսինքն՝ արդյունաբերության ընդհանուր աճումից զգալիորեն ավելի: Ապահովել ամեն տեսակ դադարահանների արտադրությունը, վնասվածքներն բարձրացնելով մեծ արտադրողականություն ունեցող ու հատուկ դադարահանների, մանավանդ ավտոմատների և կիսավտոմատների տեսակաբար կշիռը: Մեծագույն դադարահանների թողարկումը ավելացնել՝ 1942 թվականին հասցնելով 70 հազար հատի՝ 1937 թվականին 36 հազար հատի դիմաց, դադարահանների ամբողջական հասցնելով 800 տիպաչափի: Ամեն կերպ պարզացնել դադարահանյին մաշված սարքավորման վնասվածքներն ու մոդեռնիզացումը: Կրկնապատկել գործիքի, հատկապես նոր-մաշված գործիքի թողարկումը: Ավելացնել պնեմատիկ ելեկտրական և մի շարք այլ տեսակների փորակավոր գործիքի թողարկումը:

Հաղթահարել ենթարդետիկ մեքենայինության համեմատաբար հետ մնալը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության հարաճուն պահանջներից: Հնդամյակի ընթացքում շոգե-տուրբինների թողարկումը 1942 թվականին 1937 թվականի համեմատությամբ ավելացնել 5,9 անգամ, շոգեկաթսաներին՝ 5,2 անգամ: Ըստամենայնի ընդարձակել և ավելացնել 12 հազար կիլովատ և ավելի թիչ կարողություն ունեցող միջակ ու փոքր տուրբինների տեսակաբար կշիռն արտադրության մեջ: Յուրացնել հզոր հիդրոտուրբինների արտադրությունը Կույբիշևիկ հիդրոհանգույցի համար:

Հատուկ ուշադրություն նվիրել լոկոմոբիլներին, ստացիոնար ու նավային դիզելներին, առաջին հերթին արագաշարժ դիզելների, ինչպես և դադով աշխատող շարժիչների արտադրության զարգացմանը: Գազոդենքատուրբինների փոխադրել առատահատման ասպարեզում աշխատող բոլոր մեքենաները, ինչպես և դյուզամոտետություն արտադրա-յին պարկի և ավտոմոբիլային պարկի զգալի մասը:

Հաղթահարել շինարարական և ճանապարհային մեքենաների ու մեխանիզմների արտադրության, ինչպես նաև շինարարական գործիքների թողարկման հետ մնալը: Ըստա-

մենայնի զարգացնել Եքսկավատորներին, հողահաններին և հիդրոմեխանիզմների արտադրութունը:

Ուժեղացնել քիմիական արդյունաբերության համար բարդ ապարատուրաների ու սարքավորման արտադրութունը և լիովին ապահովել քիմիական արդյունաբերության հզոր աճումը: Յուրացնել նոր, տեխնիկապես կատարելագործված արագաչարժ տիպի մանվածքային ու ջուլհակային մեքենաների արտադրութունը, տեքստիլ, տրիկոտաժային ու կոշիկեղենի ֆաբրիկաների համար դադեյաճանքի ու սարքավորման արտադրութունը, հատուկ ուշադրութուն դարձնելով արտադրական պրոցեսներն ավտոմատիկացնող մեքենաների յուրացման վրա, վերացնել մանածագործական սարքավորման արտադրության հետ մնալը, վատերների թողարկումը մինչև հնգամյակի վերջը ավելացնելով վեց անգամ (Ընդհանուր մեքենաշինության ժողկոմատի հշտով): Եւ ավելի զարգացնել աննդարդյունաբերական մեքենաշինությունը, ապահովելով մանավանդ լցնող ու փաթաթող մեքենաների արտադրության աճումը: Ծովային և ովկիանոսային տրանսպորտն ապահովել ժամանակակից նավերի բոլոր տեսակներով և նավաշինարարության համար ստեղծել աշխարհի արտադրական կարողություններ, վորոնք բավականանան ԽՍՀՄ-ի ծովային ու զետային տրանսպորտի աճող պահանջները հայրենի արտադրությամբ ապահովելու համար: Ընդարձակել ավտոմատիկ և տելե-մեխանիկական կառավարման ապարատուրայի արտադրութունը: Ընդարձակել մետալուրգիական սարքավորման արտադրութունը սև ու դեղնավոր մետալուրգիայի համար, ինչպես նաև աշխատունի աշխատանքները մեքենայացնելու համար պահանջվող սարքավորման արտադրութունը, մասնավորապես՝ բարձրացնող-տրանսպորտային և բեռնող մեքենաների արտադրութունը:

4. Ամեն կերպ զարգացնել արդյունաբերության ածխային ու նավթային ճյուղերը, վորոնք հանդիսանում են յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության վառելանյութային բազան: Ածխի հանույթը զարգացնել մինչև այն մակարդակը, վորն ապահովի վոչ միայն յերկրի ընթացիկ պահանջների բավարարումը, այլև տնտեսական պաշարների ու պե-

տական ռեզերվների ստեղծումը: Ապահովել ածխի հանույթի առավել բարձր տեմպեր Ուրալի ածխային շրջաններում, Մերձմոսկովյան ավազանում, Հեռավոր Արևելքում ու Միջին Ասիայում և նրանցում ածխի հանույթը յերրորդ հընդամյակում ավելացնել՝ Ուրալում 3,1 անգամ, Մերձմոսկովյան ավազանում՝ 3,7 անգամ, Հեռավոր Արևելքում՝ 2,7 անգամ և Միջին Ասիայում՝ 4,4 անգամ: Յերրորդ հընդամյա պլանի ժամանակաշրջանում դորշ ածխի հանույթն ավելացնել 2,6 անգամ: Տեղական ածխի հանույթի նոր բաղաներ ստեղծել յերկրի այն բոլոր շրջաններում, վորտեղ կան թեկուզ փոքր ածխահանքեր, և դրանց զարգացմանը զուգընթաց, տեղական արդյունաբերության ձեռնարկությունները, կոմունալ ձեռնարկությունները, դպրոցները, հիվանդանոցներն ու հիմնարկությունները հեռվից բերվող վառելանյութից փոխադրել տեղական վառելանյութի: Ավարտել ածխի հանույթի կոմպլեքսային մեքենացումը յերկրի բոլոր ածխային շրջաններում և ածխի հանույթը կազմակերպել ցիկլային աշխատանքի գրաֆիկը՝ հանքահատների աշխատանքի ստախանովյան արտադրողականության այդ հիմքը յերկրի բոլոր ածխային շրջաններում արհեստացնելու հիման վրա:

Վորդայի և Ուրալի միջև ընկած շրջանում ստեղծել նավթային նոր բազա՝ «Յերկրորդ Բազու»: Ապահովել նավթի հանույթի և նավթի վերամշակման ծրագրերը, արագորեն զարգացնելով յերկրաբանական-հետախուզական աշխատանքները և նավթարդյունաբերության բոլոր ճյուղերում արմատացնելով բարձր տեխնիկա:

Լայն տարածում պետք է ստանա տուրբինային հորատումը, հորատումը ճնշմամբ, շահագործման փակ մեթոդը՝ դադի վորսումով և նրանից բենզին հանելով ու քիմիական մեթոդների ոգտագործումը նավթի վերամշակման ասպարեզում: Ամեն կերպ ավելացնել բարձրակտանային վառելիքի և բարձրորակ յուղերի արտադրութունը: Կառուցել նավթամուղների ու նավթային բազաների ցանց, մանավանդ ԽՍՀՄ-ի արևելյան շրջաններում:

Տեղերում ծավալել տորֆի արդյունաբերութունը, մանավանդ աշխարհի մարդերում, ինչպիսին է Իվանովայի մար-

զը՝ հեռավոր վայրեր ածուխ փոխադրելը կրճատելու նպատակով, ավելացնել սուրֆային բրիկետների ու ցամաքեցված սուրֆի արտադրությունը, խնչպես և ամեն կերպ ուժեղացնել թերթաքարերի հանույթն ու ոգտադործումը:

Լայն ծավալել վառելանյութերի բոլոր տեսակների գազացումը և ածուխների ստորերկրյա դազացումը, ածուխների ստորերկրյա դազացումը յերրորդ հնգամյակում վերածելով արդյունաբերության ինքնուրույն ճյուղի: Յերրորդ հնգամյակի ընթացքում նավթահանքերում և զուտ գազահանքերում գաղի հանույթն ավելացնել 3,5 անգամ: Կառուցել և շահագործման հանձնել ստորերկրյա դաղիֆիկացիայի մի շարք արդյունաբերական կայարաններ Դոնբասում, Մերձմոսկովյան ավազանում և ԽՍՀՄ-ի արևելքում, ուղտադործելով ասացվող գազը եներգետիկայի, քիմիական արդյունաբերության ու կոմունալ տնտեսության համար: Խոշոր քաղաքներում, առաջին հերթին՝ Մոսկվայում ու Լենինգրադում, փայտով տաքացնելը փոխարինել գազով, ինչպես նաև չոգիով տաքացնելով՝ տեղական վառելիքի բազայի վրա: Զարգացնել կոքսային ու դոմնային գազերի ոգտադործումը, կառուցելով մաղխտարալ գազատարների ցանց, առաջին հերթին՝ Դոնբասում:

Կարճը վառելանյութի հիդրացման հիման վրա ստեղծել արհեստական հեղուկ վառելանյութի արդյունաբերություն, առաջին հերթին՝ Արևելքում, ինչպես և ստեղծել գաղից հեղուկ վառելանյութ սինթեզելու արդյունաբերություն:

5. Ելեկտրատնտեսության բնագավառում վերացնել այն մասնակի անհամաչափությունը, վորը գոյություն ունի արդյունաբերության մեծ աճման և ելեկտրոկայանների կարողությունների անբավարար ավելացման միջև, վորպեսզի ելեկտրոկայանների աճումը գերազանցի վոչ միայն արդյունաբերության աճումից, այլև ապահովի ելեկտրական կարողությունների զգալի ռեզերվների ստեղծումը: Դրան համապատասխան՝ հնգամյակի ընթացքում ելեկտրոկայանների ընդհանուր կարողությունն ավելացնել 2,1 անգամ: Զերմային ելեկտրոկայանները շինարարության մեջ անցնել 25 հազար և ավելի պակաս կիլովատ կարողություն ունե-

ցող փոքր ու միջակ ելեկտրոկայաններին: Վորպես սխալ և ժողովրդական տնտեսություն համար վնասակար մի բան՝ դատապարտել խոշոր ելեկտրոկայաններով տարվելը՝ ի վնաս փոքր ու միջակ ելեկտրոկայանների: Շրջանային ջերմակալողությունների կարողությունը յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է հատատի Կառավարությունը: Լայնորեն արմատացնել նորագույն եներգետիկ տեխնիկան, զուրըռու բարձր ճնշումն ու դերաշեղմությունը, ջերմացման նորադույն սուրբինների դործադրումը և ելեկտրոկայանների ու ցանցային տնտեսության արտադրական հիմնական պրոցեսների ավտոմատացումը:

Արդյունաբերության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի և դյուղատնտեսության բոլոր ձեռնարկությունների կարևորագույն խնդիրն է հանդիսանում վառելիքի և ելեկտրոններիցիայի տնտեսումը:

6. Քիմիական արդյունաբերությունը դարձնել արդյունաբերության առաջատար այն ճյուղերից մեկը, վորը լիովին բավարարի ժողովրդական տնտեսության և յերկրի պաշտպանության պահանջները: Յերրորդ հնգամյակը քիմիայի հնգամյակ է: Համազումարը վորոշում է քիմիական արդյունաբերության արտադրանքն ավելացնել 2,4 անգամ, այսինքն՝ զգալիորեն ավելի, քան ամբողջ արդյունաբերության աճումը: Զգալի չափով ավելացնել ծծմբային և ադոտային թթվի, սինթետիկ ամիակի, արհեստական թելի ու պլաստիկ մասսաների արտադրությունը: Ստեղծել որպանական սինթեզի նոր ճյուղեր (սինթետիկ սպիրտ, քացախաթթու և այլն), հիմնվելով նավթի վերամշակման, կաուչուկի, կոքսի արտադրության ու բնական գազերի կողմնակի նյութերի ոգտադործման վրա: Քիմիական արդյունաբերության բոլոր ճյուղերում ապահովել տեխնոլոգիական հաստատուն ռեժիմ և նորադույն նվաճումների անչեղ արմատացում, այն է՝ ինտենսիվացնել քիմիական արտադրությունը, անցնել սրբերեական պրոցեսից անընդհատի, ոգտադործել բարձր ճնշումները, դարգացնել ելեկտրոքիմիական մեթոդները: Մեքենացնել աշխատողալ պրոցեսները քիմիական արդյունաբերության մեջ, դարգացնել արտադրության ավտոմատացումը:

7. Սև մետալուրգիայի բնագավառում, վորի զարգացումը շատ կողմերով վորոշում է ամբողջ արդյունաբերության ու ժողովրդական տնտեսության աճումը և այդ պատճառով պահանջում է հատուկ մշտական հոգատարություն՝ արտադրական կարողություններն ավելացնելու մասին, — հասնել արտադրության անչեղ ու լուրջ վերելքի: Յերբորդ հնդամյակը հատուկ պողպատների հնդամյակ է: Համալուծարը վարողում է յերկու անդամ ավելացնել բարձրորակ պրոկատի թողարկումը և ապահովել հատուկ պողպատների, այն է՝ կարծր ձուլվածքների, չժանդոտող, թթվակայուն ու ջերմակայուն, դործիքային, պրեցեդիոն, տրանսֆորմատորային ձուլվածքների, ինչպես և ֆերրոձուլվածքների թողարկման խիստ ավելացումը: Լայնորեն ծավալել փայտածխային չուգունների ձուլումը՝ ծծմբից ու ֆոսֆորից ազատ հանքերից: Վերացնել պրոկատային դաղըյահներին վնասարարական մասնադիտացումը, վորի հետևանքն են լինում մետաղի հանդիպական ու հեռավոր փոխադրումները, և յերկրի հիմնական մետալուրգիական բաղանդում ապահովել մետաղի ամենադործածական բոլոր տեսակների պրոկատը:

Արդյունաբերական մասշտաբով յուրացնել մետաղի անձուլածո դրանումը, լայնորեն արմատավորել թթվածնով փչելու մեթոդը դոմենյան արտադրության մեջ. կաղմակերպել տրանսֆորմատորային դիսամոյի յերկաթի արտադրության յերկրորդ բաղա. յուրացնել և զարգացնել ղնդակավոր առանցքակալների արտադրության համար դործածվող և այլ տեսակի բարձրորակ պողպատների ձուլումը մարտենյան վառարաններում: Յուրացնել թեթեակի լեդիրացված պողպատների ձուլումը և դրանք առավելագույն չափով արմատավորել արտադրության մեջ, առաջին հերթին՝ բնական-լեդիրացված չուգուններից՝ Սալիլովյան և այլ հանքավայրերի հանքաքարերից: Զարգացնել չուգունն և պողպատն խողովակների արտադրությունը՝ կենտրոնախույս ձուլման միջոցով: Ուրալում և Սիբիրում զարգացնել մանդանային հանքաքարերի հանույթն այնպիսի չափերով, վորոնք հնարավորություն տան դաղարեցնելու այդ հանքաքարերի ներմուծումը հարավից: Հեռավոր Արևելքում ստեղ-

ծել մետալուրգիական նոր բաղա՝ մետալուրգիական լիակատար ցիկլով, տեղերում մեքենաչինության բոլոր պահանջներն ապահովելու համար: Չուգունի ձուլման մեջ Միուլթյան արեկյան չըջանների Ենեցած տեսակարար կշիռը հնդամյակի ընթացքում հասցնել յերկրի ընդհանուր ձուլման 28 տոկոսից 35 տոկոսի:

8. Գումալոր մետաղների արտադրությունն ավելացնել այն չափով, վոր սպահովվի ժողովրդական տնտեսության և յերկրի պաշտպանության արադորեն աճող պահանջների բավարարումը: 1942 թվականին սե պղնձի ձուլումն ավելացնել 2,8 անգամ, ալյումինիումի ձուլումը (ներառյալ սիլումինը)՝ առնվազն չորս անգամ՝ համեմատած 1937 թվականի հետ: Ապահովել արծճի, ցինկի, նիկելի, անագի, մագնիումի, վոլֆրամի, մոլիբդենի և սուրմայի արտադրության բարձր տեմպեր: Լայնորեն արմատացնել դունավոր մետաղները փոխարինող նյութերը մեքենաչինության բոլոր ճյուղերում: Վճռական պայքար մղել գունավոր ու սև մետաղների տնտեսման համար ինչպես ի հաշիվ կորուստների իջեցման՝ հանույթի, հարստացման ու ձուլման ժամանակ, այնպես և իհաշիվ արտադրանքի միավորի վրա մետաղի ծախսման նորմաները կրճատելու, վերամշակող դործարաններում մնացուկների բոլոր տեսակները ուսցիտնալ կեբողով սզտադործելու և չինարաթության համար մարկավորված պողպատի արտադրության:

Լայնորեն զարգացնել թթվուտակայուն և ջերմակայուն եմալների արտադրությունը՝ սև մետաղներից պատրաստվող ապարատուրայի յերեսպատման և դունավոր մետաղները դրանցով փոխարինելու համար:

9. Վերջ տալ աևտաալին արդյունաբերաւթյան հետ մնալուն: Իրաւանացնել անտառամթերումների արտադրական բոլոր պրոցեսների կոմպլեքսային լայն մեքենացումը՝ դադողենրատորային չարժիչների և չաղեչարժիչների լայն կիրառմամբ: Մաքսիմալ չափով ողաադործել ձմեռային անտառամթերումների սեղոնային առավելությունները, միաժամանակ ապահովելով փայտանյութի պատրաստումն աւմբողջ տարվա ընթացքում: Անտառային բորսաներում ստեղծել բնական ձանապարհով չորացրած փայտեղենի խոշոր

Թյան մեջ աշխատանքի արտադրողականության անում 65 տոկոսով, վորը 1942 թվականին՝ 1937 թվականի դիմաց՝ պետք է ապահովի արդյունաբերական արտադրանքի աճը միմիայն է հաշիվ աշխատանքի արտադրողականության ավելացման 62 միլիարդ ռուբլով:

բ) Հնդամյակի ընթացքում արդյունաբերական արտադրանքի ինֆլաթիոնի իջեցում (1937 թվականի դեկտեմբեր) 10 տոկոսով, վոր պետք է պետության համար ապահովի 1942 թվականին՝ համեմատած 1937 թվականի հետ՝ 20 միլիարդ ռուբլու տնտեսում:

Անհրաժեշտ է ամեն կերպ բարձրացնել արտադրանքի վորակն արդյունաբերության բոլոր ճյուղերում: Վճռական պայքար կազմակերպել անասնաբուժության դեմ, արտադրության մեջ պարասպորտների և կորուստների դեմ, իջեցնել հումքի, նյութերի, վառելանյութի և ելեկտրոսների ծախսման նորմաները: Լայնորեն ոգտադործել արտադրության մեացուկները և ցածրորակ հումքը:

Կարգավորել ստանդարտիզացիայի ու նորմալիզացիայի դործը և ապահովել ստանդարտների ավելի լայն դործադրումը ժողովրդական տնտեսության մեջ:

14. Համկ(բ)կ-ի XVIII համագումարը ամբողջ գյուղատնտեսության մեջ արտադրանքի աճումը սահմանում է 1937 թվականի 20,1 միլիարդ ռուբլուց (1926—27 թ. թ. դեկտեմբեր) մինչև 30,5 միլիարդ ռուբլի 1942 թվականին, այսինքն՝ 52 տոկոսով: Գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերի համար համագումարը հետևյալ առաջադրանքներն է սահմանում.

ա) Հացահատիկային կուլտուրաների գծով յերրորդ հնդամյակի վերջում ապահովել հացահատիկի 8 միլիարդ փութ տարեկան բերք՝ հասնելով հեկտարից 13 ցենտներ միջին բերքատվության:

բ) Տեխնիկական կուլտուրաների դեով 1942 թվականի համար. չաքարի ճակնդեղ—282 միլիոն ցենտներ բերք՝ մի հեկտարից 235 ցենտներ բերքատվությամբ. բամբակ—հումք —32,9 միլիոն ցենտներ՝ մի հեկտարից 19 ցենտներ ջրովի բամբակի բերքատվությամբ. Թեկատու վուշ—8,5 միլիոն

ցենտներ՝ մի հեկտարից 4,6 ցենտներ բերքատվությամբ և վուշի միջին համարի ավելացում:

Ապահովել կանեփի բերքատվության զգալի ավելացումը: Հատուկ ուշադրություն դարձնել կաուչուկատուների, արևածաղկի և այլ յուղատու կուլտուրաների արտադրանքի ավելացմանը՝ սերմաբուծությունը ճիշտ կազմակերպելու, ըստ առանձին չրջանների ռացիոնալ կերպով տեղադրելու, ադրոտեխնիկան բարելավելու միջոցով:

գ) Անասնաբուծության արտադրանքի աճը և անասնաբուծության ապահովումը արտադրանքի աճումն այն չափով, վոր լիավին ապահովի անասնաբուծության պրոդուկտի լուծումը ԽՍՀՄ-ում: Զիբրի թիվն ավելացնել 35 տոկոսով, խոզորյակը յուրաքանչյուր անասուններից՝ 40 տոկոսով, խոզերին՝ 100 տոկոսով, վոչխարների և այծերի թիվը՝ 110 տոկոսով, հատուկ ուշադրություն դարձնելով կուլտեսային ապրանքային ֆերմաների զարգացմանն ու խոզորացմանը: Ամենապիտան խոզերը համարել անասնաբուծության միջբրատվությունը բարձրացնելը, բարելավելով անասունների ցեղայնությունը և արմատապես բարելավելով ցեղաբուծական դործը, ճիշտ չրջանացնելով ցեղերը, ամրացնելով կերի բաղան, բարելավելով անասունների խնամքը:

դ) Մոսկվայի, Լենինգրադի, Բադվի, Մարիովի, Կիեվի, ինչպես և Դոնբասի, Կուզբասի, Դոբրոս արդյունաբերական կենտրոնների, Հեռավոր Արևելքի քաղաքների և մյուս բոլոր խոզոր քաղաքների շուրջն ստեղծել կարտաֆիլա-բանջարաբուծական ու անասնաբուծական քաղաքներ, վորոնք լիովին ապահովեն բանջարեղենի, կարտաֆիլի և զգալի չափով կաթի ու մսի մատակարարումն այդ կենտրոններին:

յե) Ապահովել հացահատիկային և այլ կուլտուրաների ցանքերը թե՛ սելեկցիոն և թե՛ տեղական տեսակների բացառապես բարձրասորտ ու բարելավված բնափոխերով: Կուլտեսային յուրաններում և խորհրդային յուրաններում արմատացնել արտադրանքի և զուտ ցեղերի կիրառմամբ ճիշտ ցանքաչրջանաբուծություններ, վորոնք ապահովեն հողի արդասավորության զգալի ավելացումը, բերքատվության

աճումը և աճող անասնաբուծության համար կերի ամուր բազայի ստեղծումը:

դ) Լիկվիդացիայի յենթարկել հողաշինարարական աշխատանքների լքված վիճակը և կարգավորել հողաշինարարության գործը կոլտնտեսություններում. հողաշինարարական աշխատանքները փոխադրել պետական բյուջեյի:

ե) Յերրորդ հնդամյակում ավարտել դյուղատնտեսական աշխատանքների կոմպլեքսային մեքենայացումը: Այսպես հովել կցորդ ինվենտարի խնդրում դյուղատնտեսություն պահանջի լրիվ բավարարումը՝ տրակտորային պարկի սուկայություն ու տիպերին համապատասխան: Լայնորեն արմատավորել առաջավոր ագրոտեխնիկան՝ զիտականորեն ողտագործելով դյուղատնտեսություն առաջավորների պրակտիկ մեծ փորձը: Հատուկ ուշադրություն դարձնել անասնաբուծության աշխատանքի պրոցեսների մեխանիզացիային խորհանտեսություններում և կոլտնտեսային ֆերմաներում: Լայնորեն ծավալել կոլտնտեսային մանր հիդրոկայանների, հողմային և գազոլեններատորային ելեկտրոսարքավորումների կառուցումը՝ տեղական վառելիքի հիման վրա:

Սվեյացնել դյուղատնտեսական բույսերի վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ մեքենաների և ապարատուրայի արտադրությունը:

Սվեյացնել ձիաքարշ կցորդ և մանավանդ տրանսպորտային ինվենտարի արտադրությունը: Ապահովել հացահատիկ գոտի ամենահասարակ մեքենաների արտադրության բնագործակումը:

ը) Կոլտնտեսություններում և խորհանտեսություններում յուրացնել օրգանական ու հանքային պարարտանյութերի ճիշտ սխեմայի կիրառումը, հատուկ ուշադրություն դարձնելով դոմադրի և տեղական այլ պարարտանյութերի օացիոնալ պահպանմանն ու ոգտագործմանը, լիկվիդացիայի յենթարկել հանքային պարարտանյութերի կորուստները: Պրակտիկայում լայնորեն արմատավորել մոխրային հոդերի կրայնացումը և ազոտահոդերի դիպոսայնացումը:

թ) Գյուղատնտեսական արտադրության հետագա մեքենայացման և աշխատանքի արտադրողականություն աճման

հիման վրա, խորհանտեսություններն իրոք դարձնել բարձրարտադրողական, խիստ չահաբեր տնտեսություններ, վերոնք դյուղատնտեսական արտադրության կազմակերպման օրինակ, նրա բարձր բերքատվության և մթերատվության օրինակ ծառայեն. ավելացնել անասունների թիվը յոթանոթողկոմատի խորհանտեսություններում, հատկապես իհաչիվ հացահատիկային խորհանտեսություններում անասնաբուծության կազմակերպման:

15. Համադումարը սահմանում է յերկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության աճում՝ 1937 թվականի 355 միլիարդ տոնն-կիլոմետրից մինչև 510 միլիարդ տոնն-կիլոմետր՝ 1942 թվականին. գետային տրանսպորտինը—33 միլիարդից մինչև 58 միլիարդ տոնն-կիլոմետր. ծովային տրանսպորտինը—37 միլիարդ տոնն-կիլոմետրից մինչև 51 միլիարդ տոնն-կիլոմետր: Տրանսպորտի կարևորագույն խնդիրն է հանդիսանում բեռնաշրջանառության պլանավորման կարգավորումը՝ նպատակ ունենալով ամեն կերպ կըրճատել յերկաթուղային հեռավոր փոխադրումները, լիկվիդացիայի յենթարկել հանդիպական ու վոչ-ոացիոնալ փոխադրումները և ջրային ու ավտոտրանսպորտի տեսակարար կշռի հետագա բարձրացումը յերկրի բեռնաշրջանառության մեջ:

Յերրորդ հնդամյակում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 32 տոկոսով՝ յերկաթուղային տրանսպորտում և 38 տոկոսով՝ ջրային տրանսպորտում, մեխանիզացիայի յենթարկել բեռնման-բեռնաթափման աշխատանքները յերկաթուղային, ջրային և ավտոմոբիլային տրանսպորտներում:

16. Համադումարը յերկաթուղային տրանսպորտի դժով յերրորդ հնդամյակի համար սահմանում է հետևյալ առաջադրանքները.

ա) Լոկոմոտիվների պարկն ավելացնել 8000 միավորով, այդ թվում՝ «ՅԳ» սերիայինը—1500 չոգեքարշով, կոնդենսացիոն չոգեքարշերինը—4200 միավորով, «ԻՍ» սերիայի մարդատար չոգեքարշերինը՝ 1500 միավորով: Կոնդենսացիոն չոգեքարշերը մոտակա տարիներին պետք է

առաջատար տեղ դրավեն շողեքարչերի բեռնային պարկի մեջ:

բ) Բեռնատար վազոնների վագոնային պարկն ավելացել 225 հազար քառասունի վազոնով, մարդատար վազոնների պարկը՝ 15 հազար միավորով: Ավտոմատ կցմամբ սարքավորել գործող ապրանքատար պարկից 300 հազար վազոն և 4 հազար մարդատար վազոն: Ավտոմատ արդեւաններով սարքավորել գործող ապրանքատար պարկի 200 հազար վազոնները: Ընդարձակել շողեքարչերի և վազոնների նորոգման բազան, մանավանդ Ուրալի, Միջին Ասիայի, Սիբիրի, Հեռավոր Արեւելքի յերկաթուղիներում: Նախապատրաստել արտադրական բազա կոնդենսացիոն շողեքարչերի նորոգման համար:

գ) Ապահովել յերկաթուղային տրանսպորտի և մանավանդ յերկաթուղային գծի հետագա վերակառուցումը: Ֆերրորոդ հնգամյակում կառուցել և շահագործման հանձնել 11 հազար կիլոմետր յերկաթուղիներ և յերկրորդ գծեր անցկացնել 8 հազար կիլոմետր տարածության վրա:

դ) Ելեկտրիֆիկացիայի յենթարկել 1-840 կիլոմետր յերկաթուղիներ, առաջին հերթին՝ բեռնային յերկաթուղիները, այն գծերը, վորոնք լարված բեռնաշրջանառություն ունեն, ինչպես նաև մերձքաղաքային ինտենսիվ յերթեկուցություն ունեցող խոշորագույն հանգույցները: Ամեն կերպ արմատավորել ավտոբոկիլիքովկան, դիսպետչերային օրգանալիզացիան և ավտոգտտոպների կիրառումը:

յե) Չարգացնել յերկաթուղային կայարանները և հանգույցները, առաջին հերթին՝ այն ուղղություններում, վորոնք կապում են Դոնքասը Կրիւոյ Ռոգի, Լենինգրադի ու Մոսկվայի հետ, Ուրալի արեւելյան շրջանները, Հյուսիսային յերկրամասը, Մուրմանի մարզը՝ ԽՍՀՄ-ի կենտրոնական մասի հետ, Արեւմտյան Սիբիրը՝ Միջին Ասիայի հետ, Հարավ-Արեւմտյան, Արեւմտյան ու Արեւելյան յերկաթուղիներում:

17. Համադումարը ջրային, ավտոմոբիլային և ոդային տրանսպորտի գծով յերրորդ հնգամյակի համար ռահմանում և հետեյալ առաջադրանքները.

ա) Լիկվիդացիայի յենթարկել ջրային տրանսպորտի հետ մնալը, բարձրացնել նրա դերը ժողովրդական տնտեսության սպասարկման ասպարեզում, մանավանդ մասնայական բեռների՝ փայտեղենի, հացահատիկի, ածխի, նավթի փոխադրության մեջ: Բարելավել ծովային և գետային նավատորմի տեխնիկական վիճակը, այն լրացնել նավերի ավելի կատարելագործված տիպերով, լայնորեն արմատավորել զադոգեներատորային սարքավորումները գետային նավերի վրա: Ընդարձակել նավանորոգման բազայի և ծովային նավահանգիստների շինարարությունը:

Լայն ձեռնարկումներ կիրառել գոյություն ունեցող ջրային ուղիները վերակառուցելու և կարգի բերելու ուղղությամբ, վերակառուցել Աստրախան-Դոնկի-Ռիբինսկ-Մոսկվա ուղին այն հաշվով, վորպեսզի յերրորդ հնգամյակի վերջում խորջրյա տրանզիտային ուղի ստեղծվի Աստրախանից մինչև Մոսկվա, բոլոր անցումներում ապահովելով առնվազն 2,6 մետր խորություն: Ծավալել Վոլգա-Բալթիկ ջրային ուղու վերակառուցումը: Ներքին ջրային նավարկելի ուղիների ընդհանուր յերկարությունը հնգամյակի ընթացքում 102 հազար կիլոմետրից հասցնել մինչև 115 հազար կիլոմետրի:

Ֆերրորոդ հնգամյակում մշակել Վոլգա, Դոն և Դնեպր գետերի կոմպլեքսային վերակառուցման սխեման. ձեռնարկումներ նախապատրաստել Կասպից ծովի մակարդակը պահպանելու ուղղությամբ և սկսել Վոլգա-Դոն միացման շինարարությունը:

Մինչև յերրորդ հնգամյակի վերջը Հյուսիսային Ծովային Ուղին դարձնել նորմալ կերպով գործող ջրային մագիստրալ, վորն ապահովի սլանաչափ կապը Հեռավոր Արեւելքի հետ:

բ) Կազմակերպել ավտոմոբիլային տրանսպորտի կանոնավոր յերթեկուցություն ավտոմագիստրալներում, տրակտներում և բեռնային լարված յերթեկուցություն ունեցող՝ դեպի քաղաքները, յերկաթուղային կայարաններն ու ջրային ճանապարհները տանող մատուցուղիներում: Ապահովել անհրաժեշտ նորոգման բազա ավտոտրանսպորտի համար:

Ձարդացնել դարձանքի ու վրձ-դարձային կանգառայրե-
րի, սպասարկման կայարանների և ավտոմոբիլներին վառե-
լիք մատակարարող կոլոնկաների կառուցումը: Հնդամյակի
ընթացքում ավտոմոբիլային փոխադրումներն ավելացնել
4,6 անգամ: Ամեն կերպ զարգացնել ավտոկցորդների աբ-
տադրությունն ու կիրառումը բեռնատար ավտոտրանսպոր-
տում: Կառուցել և վերակառուցել 210 հազար կիլոմետր
ճանապարհ, յերկրորդ հնդամյակի համեմատությամբ վրձ-
ռականորեն ավելացնելով կատարելագործված գուղորոնա-
պատ, ասֆալտա-բետոնապատ ու բետոնապատ ճանապարհ-
ների շինարարության տեսակարար կշիռը:

Միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնել գոյու-
թյուն ունեցող ճանապարհները հարկ յեղած կանոնավոր
վիճակում պահելուն, ժամանակին կատարելով նրանց ան-
հրաժեշտ ընթացիկ ու վերականգնողական նորոգումը:

զ) Քաղաքացիական ավիացիայի աշխատանքը կենտրո-
նացնել հիմնական պետական գծերի վրա: Բարձրացնել ողա-
յին մագիստրալների տեխնիկական սարքավորումը, ընդար-
ձակելով և բարելավելով վերերկրյա կառուցումները:

18. Համագումարն ընդգծում է, վոր անհրաժեշտ է
մեծ չափով զարգացնել կապի բոլոր տեսակները, մանա-
վանդ՝ միջքաղաքայինը:

Ավարտել հեռախոսային ուղիղ կապի հաստատումը
Մոսկվայի և բոլոր հանրապետական, յերկրամասային ու
ժարգային կենտրոնների միջև, ինչպես նաև կապի շառավ-
ղային սիստեմը լրացնել իՍՂՄ-ի խոշորագույն կենտրոն-
ների միջև կապի հանգուցային սիստեմով: Լիովին ավար-
տել չրջանային կենտրոնների, գյուղխորհուրդների, ՄՏԿ-
ների և խորհանտեսությունների հեռախոսացումը: 2,3 ան-
գամ ավելացնել ընդունիչ ուղիղ-տրանսլացիոն կետերի
քանակը: Մի շարք խոշոր քաղաքներում կառուցել տեlex-
վիզիոն կենտրոններ:

19. Յերրորդ հնդամյակում արտադրանքի աճման ծրու-
գրի առաջադրանքները կատարելու կարևորագույն պայմանն
է վորակյալ բանվորական կադրերի, տեխնիկների ու ինժե-
ներների պատրաստումը, ինչպես նաև նորագույն տեխնի-

կան արժատավորելու և արտադրությունը գիտականորեն
կազմակերպելու աշխատանքների լայն ծավալումը: Համա-
գումարն անհրաժեշտ է դառնում յերրորդ հնդամյա պլանում
նախատեսել.

ա) վորակյալ բանվորների և օդկալիստական աշխա-
տանքի վարպետների պատրաստման ու վերապատրաստման
գյուղոցների և դասընթացների լայն ցանցի ծավալումը:

բ) Չանազան մասնագիտության 1,4 միլիոն տեխնիկներ
և բարձրագույն կրթությամբ 600 հազար մասնագետներ
բաց թողնելը:

III. ՅԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԼԱՆԸ

1. Արտադրության աճման պլանին համապատասխան՝
Համկ(բ)Կ XVIII համագումարը ժողովրդական տնտեսու-
թյան գծով կապիտալ աշխատանքների ծավալը յերրորդ
հնդամյակում սահմանում է 192 միլիարդ ուրբլու չափով
(գործող նախահաշվային գներով)՝ յերկրորդ հնդամյակի
114,7 միլիարդ ուրբլու դիմաց, վորից՝

ա) Արդյունաբերության մեջ—111,9 միլիարդ ուրբլի՝
յերկրորդ հնդամյակի 58,6 միլիարդ ուրբլու փոխարեն. այդ
թվում՝ արտադրության միջոցներ արտադրող արդյունաբե-
րության գծով—93,9 միլիարդ ուրբլի՝ յերկրորդ հնդամյա-
կի 49,8 միլիարդ ուրբլու դիմաց, կամ աճում 89 տոկոսով.
լայն ուղուման միջոցներ արտադրող արդյունաբերության
գծով—18 միլիարդ ուրբլի՝ յերկրորդ հնդամյակի 8,8 մի-
լիարդ ուրբլու փոխարեն, կամ աճում 105 տոկոսով:

բ) Տրանսպորտի մեջ—37,3 միլիարդ ուրբլի՝ յերկրորդ
հնդամյակի 20,7 միլիարդ ուրբլու փոխարեն, կամ աճում
80 տոկոսով:

զ) Դյուլադանտեսության մեջ—11 միլիարդ ուրբլի, այդ
թվում՝ ՄՏԿ-ներում—5,2 միլիարդ ուրբլի, իրերիցայի
և մեխիորացիայի վրա—1,3 միլիարդ ուրբլի և, բացի դրա-
նից, խորհանտեսություններում անասունների թվի աճման
վրա—2,5 միլիարդ ուրբլի: Կապիտալ ներդրումները գյու-

դատնետեսության մեջ, բուն կոլտնտեսություններում, յեր-
րորդ հնգամյակում կկազմեն մինչև 24 միլիարդ ռուբլի:

2. Համագումարը հաստատում է նոր և վերակառուց-
ված ձեռնարկությունների գործարկումը յերրորդ հնգամյա-
կում 193 միլիարդ ռուբլի արժողությամբ (գործող նախա-
հաշվային գներով)՝ յերկրորդ հնգամյակի 103 միլիարդ
ռուբլու փոխարեն:

Համագումարը նշում է, վոր կապիտալ աշխատանքնե-
րի սահմանված ծավալը և նոր ու վերակառուցված ձեռ-
նարկությունների գործարկման ծրագիրն ապահովում են
ԽՍՀՄ-ի արտադրական-տեխնիկական բազայի հետագա մեծ
աճում և կարողությունների անհրաժեշտ ուղղորդման գոյա-
ցումը ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղնե-
րում: Յերրորդ հնգամյակում արտադրական կարողություն-
ներն աճում են. ելեկտրոկայանների գծով՝ յերկրորդ հըն-
գամյակի վերջի 8,1 միլիոն կիլովատից մինչև 17,2 միլիոն
կիլովատ՝ յերրորդ հնգամյակում. ամխարդյունաբերու-
թյան գծով՝ 1,8 անգամ, յերրորդ հնգամյակի վերջում
շախտանքի կարողությունը հասցնելով մինչև 335 միլիոն
տոնն աճուխի. սև մետալուրգիայի գծով (չուգուն)՝ մինչև
25 միլիոն տոնն. գունավոր մետալուրգիայի գծով
(պղինձ)՝ 2,4 անգամ, ալյումինիումի գծով՝ 3,8 անգամ.
ավտոմոբիլային արդյունաբերության գծով՝ համարյա յեր-
կու անգամ. բամբակե գործվածքեղենի արդյունաբերու-
թյան գծով (իլիկներ)՝ 1,5 անգամ:

3. Համագումարը գտնում է, վոր յերրորդ հնգամյա-
կում ըստ ԽՍՀՄ-ի շրջանների նոր շինարարությունը տեղա-
դրելիս անհրաժեշտ է յեղնել արդյունաբերությունը հումքի
աղբյուրներին և սպառման շրջաններին մոտեցնելուց, վոր-
պես յոնալ ու չափից դուրս հեռավոր փոխադրումները լիկ-
վիդացիայի յինթարկելու, ինչպես նաև ԽՍՀՄ-ի անցյա-
լում տնտեսապես հետամնաց շրջանների հետագա վերելքի
նպատակով: Դրան համապատասխան՝ յերրորդ հնգամյա
պլանում անհրաժեշտ է.

ա) Միության հիմնական տնտեսական շրջաններում
ապահովել տնտեսության կոմպլեքսային զարգացումը և

կազմակերպել վառելիքի հանույթն ու նյութերի այնպիսի
տեղակների արտադրությունը, ինչպես ցեմենտը, ալեբաս-
տը, ջրմիական պարարտանյութերը, ապակին, թեթև ու
ոնղի արդյունաբերության մասսայական առարկաները՝
այդ շրջանների պահանջն ապահովող չափերով: Հատուկ
նշանակություն ունի արդյունաբերական այն խոշոր շրջան-
ների ապահովումը տեղում վառելիքով և դժվար փոխադրե-
լի միջանի մթերքներով, վորոնց կախումը մեծ քանակու-
թյամբ բեռների հեռավոր փոխադրումից՝ ավելացել է
նրանց արդյունաբերական աճման և քաղաքային բնակչու-
թյան արագ ավելացման կապակցությամբ:

Ամենուրեք մասսայական քանակությամբ գործածվող
այնպիսի սննդամթերքներ, ինչպես կարտոֆիլը, բանջարե-
ղենը, կաթնամթերքներն ու մսամթերքները, ալյուրը, հրու-
շակեղենը, զարեջուրը, ինչպես նաև մասսայական սպառ-
ման մի շարք արդյունաբերական առարկաներ—զալանտե-
րեյա, կարի արդյունաբերության առարկաներ, կահույք,
աղյուս, կիր և այլն, պետք է բավարար քանակությամբ
արտադրվեն յուրաքանչյուր հանրապետությունում, յերկ-
րամասում ու մարզում:

Ապահովել հարկ յեղած վերահսկողությունը՝ Մոսկվա-
յում և Լենինգրադում նոր ձեռնարկությունների կառուցումն
արգելելու մասին Համի(բ)ի Կենտկոմի ու ԽՍՀՄ Ժողկոմ-
խորհի վորոշման կատարման նկատմամբ, ինչպես նաև այդ
վորոշումը տարածել Կիևի, Սարկովի, Դոնի Ռոստովի,
Գորկու, Սվերդլովսկի վրա, վորտեղ այսուհետև արգելել
նոր ձեռնարկությունների կառուցումը:

բ) Յերկրի այնպիսի տնտեսական ոջախներում, ինչպես
արևելյան շրջանները, Ուրալը և Պովոլժյեն, յերրորդ
հնգամյակում ստեղծել դուրսը—ձեռնարկություններ՝ մե-
քնաշինության, նավթավերամշակման ու ջրմիայի մե-
շարք ճյուղերի գծով, վորպետեղ վերացվեն պատահակա-
նություններն ունիկում—ձեռնարկություններից միջանի ար-
դյունաբերական մթերքների մատակարարման գործում:

գ) Նախատեսել կապիտալ աշխատանքների ծավալի և
ավելի արագ աճում և նոր ձեռնարկությունների կառուցում

ընդհանուր կարողությամբ, վորը միաժամանակ լուծում է չորային հողերի վռուգման պրոբլեմը՝ Զավոլժեյում կայուն բերքի հասնելու համար, և Վոլգայով ու Կամայով նավագնացության գործը: Սկսել նաև Կալուզայի հիդրոէլեկտրոկայանի կառուցումը Ոկա գետի վրա: Կառուցումն ավարտել և գործի դնել հետևյալ հիդրոկայանները. Ուգլիչի, Ռիբինսկի, յերկու Չիրչիկյան, Քանաքեռի, Սվիր—2, Խրամի, Նիվա—3, Սուխումի և այլն: Սկսել նոր հիդրոկայանների կառուցումը՝ Վերին Կամայի, Մինգիչաուրի, Ուստ-Կամենոգորսկի, Գյումուլչի, ինչպես նաև լայնորեն ծավալել տեղական վոչ-մեծ հիդրոկայանների շինարարութիւնը, այդ թվում՝ Ուրալի շրջաններում, Տուրա, Ուֆա, Չուսովայա, Բելայա, Միաս ու այլ գետերի վրա, ինչպես նաև Հյուսիսային Դոնեցի վրա:

Վառելիքի տնտեսման նպատակով լայնորեն զարգացնել քամու վոչ-մեծ ելեկտրոկայանների կառուցումը: Նախատեսել 102 շրջանային ջերմա-էլեկտրոկայանների կառուցումը, գործի դնելով Կուրախովսկի, Նեալետայեվսկի ջերմա-էլեկտրոկայանները, միքանի ջերմա-էլեկտրոկայաններ Մոսկվայում և Լենինգրադում, Չելյաբինսկի ջերմաէլեկտրոկայանը, Սումգաիտի, Կոմսոմոլսկի, Կիևի, Նիկոլայեվսկի, Կիրովո-Չեպեցկի, Սիզրանի, Որսկի, Կարազանդայի, Կրասնոյարսկի, Խարարովսկի, Կովասայսկի, Կրասնոդարի և այլն: Իվանովոյի շրջանում կառուցել տորֆով աշխատող նոր ջերմաէլեկտրոկայան՝ տեքստիլ արդյունաբերության համար:

Ամեն կերպ զարգացնել բարձրավոր ելեկտրոցանցերի և յենթակայանների շինարարութիւնը:

Կարողութիւնների ընդհանուր աճն Էլեկտրոշինարարության գծով յերրորդ հնգամյակի ընթացքում սահմանել 9 միլիոն կիլովատ, ապահովելով արդյունաբերական շրջաններում մշտական եներգետիկ ռեզերվի ստեղծումը 10—15 տոկոս կարողությամբ:

դ) Ամխարդյունաբերության մեջ ծավալել հանքահորերի կառուցումը, ինչպես քարածխի, ալյուս և գորշ ածխի հանույթի գծով: Յուրացնել ածխի հանույթի նոր շրջաններ, հատկապես Ուրալում, Թաթարական ու Բաշկիրական

ՍՍՀ-ներում, Արևելյան Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Ղազախական ՍՍՀ-ում, Ուկրաինայում, Կիրգիզական ու Տաջիկական ՍՍՀ-ներում: Կառուցել գլխավորապես միջին ու վոչ-մեծ կարողության հանքահորեր, ամեն կերպ կրճատելով ու արագացնելով շինարարության ժամկետները: Ընդամենը հնգամյակի ընթացքում փորել քարածխի նոր չախտաներ 170 միլիոն տոնն ընդհանուր կարողությամբ, գործարկման հանձնելով 160 միլիոն տոնն:

Նավթարդյունաբերության մեջ ապահովել նավթավերամշակման գործարանների նոր կարողութիւնների գործարկումը 15 միլիոն տոնն և, բացի դրանից, կրեկինդ-սարքավորումներին՝ 4,5 միլիոն տոնն: Յերրորդ հնգամյակում վճռական խնդիր համարել ևս մեկ հզոր նավթային բազայի ստեղծումը Վոլգայի և Ուրալի միջև գտնվող շրջանում, կառուցելով այնտեղ նավթավերամշակման գործարաններ 6 միլիոն տոնն կարողությամբ: Ապահովել յերկրարանական-վորոնման և հետախուզական աշխատանքների ծավալումը նավթի հանույթի նոր շրջաններում—Վոլգայի և Ուրալի միջև, Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Ուկրաինայում, Միջին Ասիայում և Ղազախական ՍՍՀ-ում:

Տարփային և քերթաքարային արդյունաբերության գծով ապահովել կապիտալ աշխատանքների անհրաժեշտ աճումը: Նախատեսել տորֆի արհեստական ջրադրկման գործարանների կառուցումը, վորը հիմք է դնում տորֆի հանույթի ասպարեզում սեզոնականութիւնը լիկվիդացիայի յենթարկելուն: Իրականացնել յերկու-յերեք կոքսային գործարանների կառուցումը, դրանցում նախատեսելով նաև քիմիական նյութերի մշակութիւնը:

զ) Սև մետալուրգիայի ասպարեզում աւարտել Մագնիտոգորսկի կոմբինատի կառուցումը՝ կազմված 6 դոմնաներից և յերկու բլումինգներից, Նիժնետադիլի և Պետրովսկ-Չարայկալսկի գործարանների, Մամուրտալստրոյի, Չապորոժստալի, Ազովստալի, Կրիվոյ-Ռոգի, Նովոմոսկովսկի թիթեղագործական, Նովո-Ուրալսկի և Նիկոպոլսկի խողովակային գործարանների կառուցումը: Սկսել մետալուրգիական նոր գործարանների կառուցումը՝ Հարավային

Ուրալում (խալիվայան և բալալի հանքաքարի հիման վրա) և Արևելյան Սիրիոյում, զոգւած խողովակների գործարաններ՝ Ուրալում, խողովակադրոհատային մեկ գործարանինը՝ Սիրիոյում և խողովակաձուլական գործարանինը՝ Կենտրոնում: Լոմի և մետաղի մնացուկների ոգտադործման բաղայի վրա ծավալել վերադիտման վոչ-մեծ գործարանների կառուցումը տեղական կարիքների համար՝ Միջին Ասիայի և Անդրկովկասի շրջաններում: Ձուլման համար հանքաքարի նախապատրաստումը բարելավելու նպատակով կառուցել առնվազն 17 ագլոմերացիոն ժապավեններ: Դործող բոլոր գործարաններում ավարտել աշխատունիալ պրոցեսների մեխանիզացիան և լայնորեն արմատաւորել արտադրության ավտոմատիզացիան: Պրոկատի վորակը բարելավելու համար բոլոր գործարանների պրոկատային ցեխերի սարքավորումը լրացնել անհրաժեշտ հարդարիչ սարքավորումներով: Յերբորդ հնգամյակի ընթացքում ընդամենը կառուցել 20 դոմենյան վառարան և վերականգնել փայտի ածուխով աշխատող յերեք դոմենյան վառարանները՝ Ուրալում:

Սկսել հանքահորերի կառուցումը Կուրսկի մագնիսային անոմալիայի շրջանում՝ վորպես Կենտրոնի սև մետալուրգիայի լրացուցիչ բաղա և նախապատրաստական ձեռնարկումներ կիրառել Կուրսկի մագնիսային անոմալիայի շրջանում մետալուրգիական գործարանի կառուցման ուղղությամբ:

Ավարտել Ատտուլսկի և Կարսակալայսկի հանքավայրերի արդյունաբերական հետախուզումը:

յ) Գումալոր մետալուրգիայի ասպարեզում ավարտել Մերձբալխայան արդնաձուլական կոմբինատի, Միջին-Ուրալյան և Բլավինսկի կոմբինատների կառուցումը: Ծավալել Ջեզկազգանդի, Ալմալիկի արդնաձուլական կոմբինատների կառուցումը, ինչպես նաև կապարի ու ցինկի գործարաններինը՝ Ալթայում: Շահագործման հանձնել Ուրալի ալյուներինը՝ Սլթայում: Շահագործման հանձնել Ուրալի ալյուներինը՝ Սլթայում ու Կուզբասում և սկսել ալյումինի մյուս գործարանների կառուցումը: Շահագործման հանձնել Տիվինսկի կավահողային իրերի գործարանը, նիկելի՝ Հարավային Ուրալի և Հյուսիսային կոմբինատները: Սկսել կապար,

ցինկ, անագ, վոլֆրամ և մոլիբդեն արտադրող մի շարք նոր ձեռնարկությունների կառուցումը: Կառուցել գումալոր արդուխտի ու բիսմութի գործարաններ, ինչպես նաև ալյումինային ու մագնիսումային ձուլվածքների վերամշակման գործարաններ:

դ) Քիմիական արդյունաբերության մեջ ծավալել ծծմբա-թթվուտային նոր գործարանների կառուցումը՝ Վլիսավորապես գոնաւոր մետալուրգիայի և էլեկտրոկայանների ցնդող, չողտագործվող դաղերի ոգտագործման բաղայի վրա, պարարտանյութերի կոմբինատների, սողայի գործարանների, սինթետիկ կաուչուկի գործարանների և շինի գործարանների կառուցումը, գործի դնել ՍԿ-ի 13—15 գործարան, կորդային՝ 9 և շինի՝ 16 գործարան, վորսնք ապակենտրոնացված լինեն յերկրում: Կառուցել արհեստական հեղուկ վառելիքի յերկու գործարան, յերկու ռեզենս-րատորային գործարան, 15 ռեզենսրատորային ցեխեր՝ շինի գործարաններին կից և աղբեստային նյութերի 2—3 գործարան:

Ստեղծել այնպիսի արտադրական բաղա, վորը լիովին ապահովի կաուչուկատուների վերամշակումը:

ե) Դաղարեցնել ցեմենտի ներմուծումը ԽՍՀՄ-ի Շեք-րոպական մասից՝ արևելյան շրջաններն ու Միջին Ասիայի հանրապետությունները, վորի համար կառուցել միջին ու վոչ-մեծ կարողության նոր ցեմենտի գործարաններ՝ ընդամենը 4,8 միլիոն տոնն արտադրական կարողությամբ, այդ թվում՝ Հեռավոր Արևելքի, Սիրիի, Ղազախական ԽՍՀ-ի, Միջին Ասիայի հանրապետությունների շրջաններում և Ուրալում:

ը) Ծավալել յերկրաբանական-հետախուզական աշխատանքները, վորսնք հումքի արդյունաբերական պաշարներով ապահովեն գործող ու յերբորդ հնգամյակում կառուցվող ձեռնարկությունները և ստեղծեն արդյունաբերական նոր պաշարների հաջորդ տարիները փոխանցվող ռեզերվներ Միության բոլոր շրջաններում:

թ) Անտառային արդյունաբերության մեջ ավարտել կառուցումը և գործի դնել Սուլիկամսկի, Կոնդոպոժսկի, Կամայի, Մաբիական, Կրասնոյարսկի, Սուոբալսկի, Ար-

խանդելսկի, Լեռնսկի, Կոմսոմոլսկի, Կոտլասկի ցեղա-
յոգի-թղթի կոմբինատները և լրագրային թղթի Փարբիկան
Կիրովի ռալոնում: Ծախսվել նոր ցեղալուրդի-թղթի, անտա-
ռա-քիմիական, Փաներային, փայտամշակման ձեռնարկու-
թյունների և բնավայրի հիդրոլիդի գործարանների կառու-
ցումը: Նախատեսել անտառամթերումների արագ զարգա-
ցումը Միուլթյան Յեվրոպական մասի հյուսիսային և հյու-
սիս-արևմտյան շրջաններում, Ուրալում և Հեռավոր Արևել-
քում: Ուժեղացնել սղոցման-փայտամշակման արդյունաբե-
րության կարողությունը Յեվրոպական հյուսիսում, Սիբի-
րում, Հեռավոր Արևելքում: Դադարեցնել անտառանյութի
փոխադրումը Սիբիրից Միուլթյան Յեվրոպական մասը:

Ժ) Թեք-և արդյունաբերության մեջ գործի դնել բամ-
բակե գործվածքեղենի նոր Փարբիկաներ՝ Բարնաուլում,
Նովոսիբիրսկում ու Կոլչուսում, ինչպես նաև իրականաց-
նել վոչ-մեծ մանվածքային Փարբիկաների կառուցումը
տեքստիլ հին շրջաններում՝ մանածագործության և ջուլ-
հակագործության միջև գիտությունների լիակից օգտի
յենթարկելու համար, գործի դնել Տալքենտի բամբակե
գործվածքեղենի կոմբինատի յերկրորդ հերթը, Լենինսկա-
նի մանվածքային Փարբիկան, Կիևի և Սեմիպալատինսկի
մահուդի կոմբինատները, ռետինե ներքանի գործարանը՝
Կալինինում և արհեստական կաշվինը՝ Կազանում: Ծախ-
վել նոր տեքստիլ Փարբիկաների կառուցումը Միջին Ասիայի
հանրապետություններում, Արևմտյան Սիբիրում ու Ղազա-
խստանում, ինչպես նաև մի շարք նոր տրեկտորա-
յին ու գուլպայի Փարբիկաների, վուլի վոչ-մեծ կոմբի-
նատների, կաշվի գործարանների, կոշիկեղենի ու մետաքսի
Փարբիկաների և սպական տարայի ձեռնարկությունների կա-
ռուցումը:

Ի) Սննդի արդյունաբերության մեջ լիովին ավարտել
մսի կոմբինատների կառուցումը և գործարկումը՝ Ուսկում,
Ենդելսում, Ուլան-Ուդեյում, Իրկուտսկում, Խաբարով-
սկում, Սվերդլովսկում, Իլանովոյում, Նալչիկում, Կույբի-
շևում, Դնեպրոպետրովսկում, Վորոշիլովգրադում, Աշ-
խաբադում, Ստալինաբադում: Հաջարի գործարաններինը՝
Յեկան-Կոլենոյում, Ժերդեվկայում, Սովետսկում (Կուբսկի

մարզ), Ալմա-Աթայում, Նովո-Տրոիցկում, Գինիանում
(Վիննիցայի մարզ), Ծպոլում (Կիևի մարզ) և մեկ շաբարի
գործարանինը՝ Հայկական ԽՍՀ-ում: Կառուցել սպիրտի մի
շարք նոր գործարաններ, յուղագործարաններ, խտացված և
չոր կաթի գործարաններ, հրուշակեղենի և թեյի Փարբիկա-
ներ: Ծախսվել մսի՝ միջին կարողությունը նոր կոմբինատնե-
րի, շաբարի գործարանների, հացի գործարանների ու սառ-
ցարանների, ծխախոտի Փարբիկաների և ոճառի գործարան-
ների կառուցումը:

Ձկնաբուծության մեջ ավելացնել ծովային ձրկ-
նորսական նավատորմը և ավարտել ձկան կոմբինատների
կառուցումը՝ Կոմսոմոլսկում, Խաբարովսկում, Մոսկվա-
յում ու Մուլյանկում: սառցարաններինը՝ Բալթայում,
Մանդիստաուլում, Ախտարիայում, Սովգավանում, Պետրո-
պոլսկում՝ Կամչատկայի վրա և 20 մանր սառցարաննե-
րինը՝ Հեռավոր-Արևելյան Յեվրոպայում: Նավաչինա-
րաններինը՝ Մուրմանսկում, Նիկոլայևսկում՝ Ամուրի վրա
և Պետրոպոլսկում՝ Կամչատկայի վրա: Նախատեսել
Կամչատկայի, Ուստուկի և Ալյանսկի շրջանների յուրացման
ավելի արագ տեմպեր ինչպես Ձկնաբուծության
փողկոմատի, ալյուսի և յերկրամասային ու մարդային կազ-
մակերպությունների կողմից:

Լ) Տեղական արդյունաբերության և արհեստագործա-
կան կոոպերացիայում ծախսվել մանր ձեռնարկու-
թյունների կառուցումը՝ տեղական հումքի և տեղական վառելիքի բա-
ղայի վրա:

Խ) Քաղաքային շինարարության մեջ ապահովել աշխա-
տանքների ծախսումը բնակարանային շինարարության և
քաղաքների ու արդյունաբերական կենտրոնների բարեկարգ-
ման գծով: Կառուցել նոր ջրամուկներ 50 քաղաքներում, կո-
յուղի՝ 45 քաղաքներում, տրամվայ՝ 8 քաղաքներում:

Զարգացնել քաղաքային տնտեսության գաղիֆիկացի-
ան: Տրամվայի նոր վագոնների թիվն ավելացնել 2900 միա-
վորով, ապահովելով նորագույն կոնստրուկցիայի չորս-
սունանի վագոնների արտադրությունը՝ Մոսկվայի, Լենին-
գրադի, Կիևի և ԽՍՀՄ-ի մյուս խոշոր քաղաքների համար:
Հատուկ ուշադրություն դարձնել քաղաքային և միջքաղա-

քային ավտոտրանսպորտի զարգացման վրա, ավտոբուսներին թիվն ավելացնելով 27 հազար միավորով և առավելագույն չափով զարգացնել մարդատար ու բեռնատար տաքսիներին կիրառումը: Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում և մյուս խոշոր քաղաքներում ընդարձակել տրոլլեյբուսային յերթեկույթյունը և դրան համապատասխան ավելացնել տրոլլեյբուսների արտադրությունը, մասնավորապես կազմակերպել յերկհարկանի տրոլլեյբուսների մասսայական թողարկումը (ВЫПУСК):

Ապահովել Մոսկվայի և Լենինգրադի հետագա զարգացումն ու վերակառուցումը՝ ընդունված պլաններին համապատասխան: Ավարտել մեծքույր յերրորդ հերթի կառուցումը Մոսկվայում:

Մինչև յերրորդ հնդամյակի վերջն ավարտել Խորհուրդների Պալատի կառուցման հիմնական շինարարական աշխատանքները:

Ճ) Գյուղատնտեսության բնագավառում իրականացնել 1500 ՄՏԿ-ների կառուցումը՝ ինչպես իհաչիվ նոր ՄՏԿ-ներին կազմակերպման, այնպես և իհաչիվ հին ՄՏԿ-ներին ապախոշորացման: Ապահովել անհրաժեշտ նորոգման բազան տրակտորների, կոմբայնների և դյուզատնտեսական այլ մեքենաների համար: Խորհտնտեսություններում ծավալել անասնապահական շենքերի կառուցումն այնպիսի չափերով, վորոնք լիովին ապահովեն անասուններին պահպանումը:

Իրրիգացիայի և մելիորացիայի դժով ավարտել խոշոր իրրիգացիոն և ցամաքեցուցիչ շինարարությունն ասպարեզում սկսված բոլոր աշխատանքները՝ Վախշ, Կովսիդա, Նեվինեռիսիկի ջրանցք, Մուրհաբի ոռոգիս: Սկսել վորոգման սխառնի կառուցումը Զավոլժյեյում: Ամրապնդել արտադրական-տեխնիկական բազան չորային շրջանների դյուզատնտեսության մեջ:

կ) Կառուցել հացահատիկային նոր Խելվատորների ու պահեստների ցանց՝ ավելի քան 10 միլիոն տոնն մթերքների ընդհանուր կարողությունը, յերրորդ հնդամյակի արդեն առաջին կեսում ապահովելով հացահատիկը բուռնորով պահելու լիակատար լիկվիդացիան:

Ծ. Արտադրական կարողությունների կառուցման և գործի դնելու ժամկետների արագացման, ինչպես նաև նոր ձեռնարկություններն ըստ յերկրի հիմնական տնտեսական շրջանների ապակենտրոնացնելու նպատակով ՀամԿ(Բ)Կ XVIII համագումարը պահանջում է վճարական պայքար քիմստոմանիայի դեմ՝ շինարարության մեջ, և լայնորեն անցնելու միջակ ու վոչ-մեծ ձեռնարկությունների կառուցմանը ԽՍՀ Միություն ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում: Արդյունաբերական շինարարության մեջ չթույլատրել չափից դուրս նեղ մասնագիտացում ունեցող ձեռնարկությունների կառուցումը և տնտեսական շրջանների ներսում կազմակերպել ձեռնարկությունների կոոպերացումը:

Համապումարն ուշադրություն է հրավիրում շինարարության արագընթաց մեքոդները պրակտիկայի մեջ վճարականորեն արմատավորելու անհրաժեշտությունը վրա, վորի համար պահանջվում է շինարարական ինդուստրիայի զարգացում, տեխնոլոգիալ շինարարական կազմակերպությունների ամեն կերպ ամրապնդում, շինարարական ինդուստրիայի վերածումը ժողովրդական տնտեսության հետ մնացող ճյուղից՝ առաջավորի, կոմպլեքսային մեխանիզացիայի լայն զարգացումով և շինարարական ստանդարտ դետալների ու կոնստրուկցիաների կիրառումով, կառուցելով դրա համար անհրաժեշտ ձեռնարկություններ:

Շինարարական աշխատանքների նվաճ ծրագրի կատարման համար յերրորդ հնդամյակում շինարարության մեջ աշխատանքի արտադրողականության աճումը սահմանել 75 տոկոսով և շինարարական աշխատանքների արժեքի իջեցումը յերրորդ հնդամյակի վերջում՝ 12 տոկոսով՝ յերկրորդ հնդամյակի վերջի մակարդակի դեմաց:

IV. ՅԵՐՐՈՐԴ ՇՆԳԱՍՅԱԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՇԵՏԱԳԱ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԼԱՆԸ

Առաջին և յերկրորդ հնդամյակների կատարումը նշանակում էր վոչ միայն ժողովրդական տնտեսության վիթ-

խարի վերելք և սոցիալիստական փոխակերպում՝ Սորհրդ-
դային Միության պաշտպանունակութիւնն ամրապնդելու
հետ միասին, այլև ՍՍՀՄ ժողովուրդների նյութական-
կուլտուրական մակարդակի մեծ վերելք:

Յերրորդ հնգամյակը պետք է ապահովի անհրաժեշտ
ապրանքների, մթերքների, բնակարանների ասպարեղջւմ,
բնակչութեան կենցաղային ու կուլտուրական սպասարկման
գործում աշխատավորների կարիքների ու պահանջների ել
ավելի բարձր բավարարումը: Յերրորդ հնգամյակի կատա-
րումը, բացի դրանից, ապահովում է մի նոր խոշորագույն
բայ՝ դեպի առաջ՝ արտադրական ուժերի հետագա զարգաց-
ման, ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակութեան բարեկե-
ցութեան և կուլտուրայի համար նյութական հզոր բազա
ստեղծելու գործում: Այժմ խոսքը գործադրելու թյան վոչնաց-
ման և դյուզում աղքատութեան վերացման մասին չէ, — այդ
խնդիրը մենք լուծել ենք լիովին և ընդմիշտ: Այժմ խնդիրն
այն է, վոր ստեղծենք աշխատավորների այնպիսի բարեկե-
ցութիւն և կուլտուրականութեան բարձրացում, վորոնք
համապատասխանում են խորհրդային ժողովրդի աճած պա-
հանջներին, վորոնք անհասանելի չեն կապիտալիզմի ամե-
նահարուստ յերկրների համար և նշանակում են սոցիալիզ-
մի ուժերի իսկական ծաղկման, նոր, սոցիալիստական կուլ-
տուրայի ծաղկման սկիզբ:

Համկ(բ)կ XVIII համագումարը յերրորդ հնգամյակի
համար բանվորների և դյուզի աշխատավորների նյութա-
կան ու կուլտուրական մակարդակի բարձրացման բնագա-
վառում սահմանում է հետևյալ առաջադրանքները.

1. ա) ՍՍՀՄ աշխատավորների սպառման ավելացումն
ավելի քան մեկ ու կես անգամ՝ բանվորների, դյուզացիներ-
ի և ծառայողների յեկամուտները աճման համապատաս-
խան:

բ) Բանվորների և ծառայողների քվակամ կազմի ավե-
լացումը յերրորդ հնգամյակի վերջում ժողովրդական
տնտեսութեան բոլոր ճյուղերի գծով 21 տոկոսով՝ 1937
թվականի համեմատութեամբ, միջին աշխատավարձին՝ 37
տոկոսով և աշխատավարձի ֆոնդին՝ 67 տոկոսով:

դ) Վարաքի և դյուզի աշխատավորների կուլտուր-կեն-

ցադային սպասարկման վրա կատարվող պետական ծախսե-
րի, այսինքն՝ սոցիալական ապահովագրութեան գծով
կատարվող ծախսերի և լուսավորութեան, առողջապահու-
թեան, բազմազավակ մայրերին տրվող նպաստի ու բանվոր-
ների և ծառայողների կուլտուր-կենցաղային սպասարկման
վրա պետութեան ծախսերի բարձրացում, բացի բնակարա-
նային և կոմունալ շինարարութեան պետական ծախսերից—
մինչև 53 միլիարդ ռուբլի՝ 1937 թվականի 30,8 միլիարդ
ռուբլու դիմաց, — աճում է ավելի քան 1,7 անգամ:

դ) Կուլտուրականների յեկամուտների զգալի ավելա-
ցում՝ կուլտուրականութեանը աշխատանքի արտադրողա-
կանութեան աճման, դյուզատնտեսական բոլոր կուլտուրա-
ների բերքատվութեան բարձրացման և անասնապահութեան
մթերատվութեան ավելացման հետևանքով:

յե) Ձեռնարկումների լայն շրջանի կիրառումը պատ-
մական խնդրի իրականացման՝ ՍՍՀՄ-ի բանվոր դասակար-
գի կուլտուր-տեխնիկական մակարդակի ինժեներա-տեխնի-
կական աշխատանքի աշխատողների մակարդակին բարձրաց-
նելու գործում լուրջ առաջնացման համար:

զ) Ընդհանուր միջնակարգ ուսուցման իրականացումը
քաղաքում և ընդհանուր յոթնամյա միջնակարգ ուսուցման
ավարտումը դյուզում ու բոլոր ազգային հանրապետու-
թյուններում՝ ընդարձակելով յերեխաների ընդգրկումը
տասնամյա ուսուցմամբ, այն հաշվով, վոր քաղաքներում
և բանվորական ավաններում տարրական և միջնակարգ
զարգացումը սովորողների թիվն ավելանա՝ 8,6-ից հաս-
նելով մինչև 12,4 միլիոնի, իսկ դյուզական վայրերում՝
20,8-ից մինչև 27,7 միլիոնի:

ե) Բուհ-ներում և բուհ-ներում սովորողների կոն-
տինգենտը բարձրացնել մինչև 650 հազար մարդու, այն հաշ-
վով, վոր ամենամոտ տարիներում զլխավոր ուշադրու-
թյունը դարձված լինի բարձրագույն կրթութեան վորակի
բարձրացման վրա:

ը) Կինո-քաղաքների, ակումբների, գրադարանների,
կուլտուրայի տների ու ընթերցարանների ցանցի ավելացու-
մը՝ ստացիոնար և այլ հնչուն կինո-ստուգավորումների
լայն կազմակերպումով և վեց անգամ ավելացումով:

թ) Աշխատավորների առողջապահությամբ, հիվանդանոցային ոգնութեան բարելավման, սանիտարական-պրոֆիլակտիկ ձեռնարկումների ընդարձակման, ծննդկաններին ծննդաբերական ոգնութիւն ցույց տալու և մանկական հիվանդանոցների ընդարձակման, աշխատանքի պահպանութեան բարձրացման և բանվորական հանգստի ու ֆիզիկուլտուրայի կազմակերպման գծով կատարվող աշխատանքի զգալի ուժեղացում, առողջապահութեան պետական ծախսերն ավելացնելով 1937 թվականի 10,3 միլիարդ ռուբլուց մինչև 16,5 միլիարդ ռուբլու՝ 1942 թվականին: Տեղերի թիվը մշտական մասերն երում և մանկապարտեզներում 1942 թվականին ավելացնել մինչև 4,2 միլիոն՝ 1937 թվականի 1,8 միլիոնի դիմաց:

յ) Բնակարանային շինարարությամբ ուժեղացումը քաղաքներում և բանվորական ավաններում՝ յերրորդ հնդամյակում չահադրծման հանձնելով 35 միլիոն քառակուսի մետր նոր բնակելի տարածութիւն:

2. Աշխատավորների կյանքի նյութական մակարդակի բարձրացման նպատակով յերրորդ հնդամյակում ասպանել խորհրդային կուլտուրական անուորի ամեն կերպ զարգացումը և դրան համապատասխան օահմանել:

ա) Պետական-կոոպերատիվ ապրանքաշրջանառությամբ ծավալի ավելացում 1942 թվականին մինչև 206 միլիարդ ռուբլու՝ 1937 թվականի 126 միլիարդ ռուբլու փոխարեն, ճաշարանների, ռեստորանների, կաֆենների և բուքներների շրջանառութիւնն ավելացնելով յերկու անգամ:

բ) Պետական-կոոպերատիվ մանրածախ առևտրական ցանցի աճում 38 տոկոսով, բարելավելով ամբողջ առևտրական գործը (սառցարանային տնտեսութիւն, առևտրական բազանների ու պահեստների կառուցում, ապրանքների փոխադրում ու ներմուծում), արագորեն աճող գյուղատնտեսական շրջաններում հատկապես զարգացնելով կրպակների ու խանութների ցանցը՝ գյուղացիների հասունացած կենցաղային, նորոգման ու շինարարական կարիքներն ասպարկող ապրանքներով:

3. Համադումարը յերրորդ հնդամյակի ընթացքում ժողովրդական յեկամտի աճումը օահմանում է 1,8 անգամ,

և այդ կապակցութեամբ օահմանում է բնակչութեան ու պետութեան աճող յեկամուտներով ինչպես ժողովրդական սպառման կարիքների, այնպես էլ ժողովրդական տնտեսութեան զարգացման, պաշտպանութեան ամրապնդման և անհրաժեշտ պետական ռեզերվների ստեղծման գործում պետական կարիքների ասպանման լիակատար հնարավորութիւն:

Ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի վիթխարի վերելքը պահանջում է ժողովրդական տնտեսութեան պլանավորման և հաշվառման կազմակերպման ուղղութեամբ ամբողջ աշխատանքի հետադա բարելավում: Պրանային աշխատանքի վերակառուցման կենտրոնական խնդիրն է հանդիսանում պլանների կատարման ստուգում կազմակերպելն այնպես, վոր կանխի դիսպրոպորցիայի առաջացումը տնտեսութեան մեջ, հայտարերել նոր ռեզերվներ պլանների կատարման համար և պլանների փաստացի կատարման արդյունքներին համապատասխան՝ կորեկտիվներ մտցվեն լատ առանձին ճյուղերի և շրջանների:

Համադումարը հաստատում է բյուջետավարկային աշխատանքի բարելավման, տնտհաշվարկի հետադա ամրապնդման, անտնտեսավարութեան գեմ պայքարի ուժեղացման, ծանր ինդուստրիայի և ժողովրդական տնտեսութեան այլ ճյուղերի շահավետութեան մակարդակի բարձրացման, խորհրդային ռուբլու ամրապնդման անհրաժեշտութիւնը՝ սոցիալիստական արտադրութեան, ասրանքաշրջանառութեան ուժեղ զարգացման և ժողովրդի կյանքի նյութական մակարդակի ընդհանուր վերելքի հիման վրա:



Յերրորդ հնդամյա պլանով առաջադրված խնդիրների անպայման կատարման նպատակով ՀամԿ(Բ) XVIII համադումարը բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական ու պրոֆմիութենական կազմակերպութիւններին պահանջում է:

ա) տնտեսական ղեկավարութեան կենդանի ոպերատիվութիւն և գործունակութիւն, ղեկավարների աշխատանք-

քի կենտրոնացում՝ կադրերի ճիշտ ընտրութեան, կուսակցութեան ու կառավարութեան կողմից սահմանված առաջադրանքների կատարման ամենաբոլորակապես բոլորողական վրա:

բ) բանվորների, վարպետների և ինժեներա-տեխնիկական աշխատողների աշխատավարձի ճիշտ կազմակերպում՝ աշխատանքի արտադրողականության աճման հարկ յեղած նյութական խրախուսումով:

գ) սոցիալիստական մրցութեան և սոցիալիստական շարժման ծավալում՝ ձեռնարկութեաններում և հիմնարկներում ապահովելով աշխատանքային ամուր կարգապահութեանը և բոլոր աշխատավորների աշխատանքի բարձր արտադրողականութեանը:

Կոլտնտեսային շինարարութեան մեջ խնդիրները հետևյալներն են՝ գյուղատնտեսական արտելի կազմակերպական-տնտեսական հետադառնումն էրպէս ամրապնդումը, կոլտնտեսութեան հանրային սեփականութեան զարգացումն ու ամրապնդումը, կոլտնտեսային անասնապահական ֆերմաների, հանրային կառուցումների, հանրային ապահովագրական ֆոնդերի և կոլտնտեսային սեփականութեան մյուս ձևերի զարգացումը, վորը գյուղատնտեսութեան և կոլտնտեսային գյուղացիութեան կյանքի նյութական-կուլտուրական մակարդակի հետադառն բարձրացման հիմքն է հանդիսանում: Դրան համապատասխան՝ անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը գյուղատնտեսական արտելի կանոնադրութեան խախտումների դեմ, թույլ չտալ տնամերձ տնտեսութեան, տնամերձ հողամասերի ապուրիների ընդարձակում և տնամերձ կոլտնտեսականների ոգտադրածման տակ զանազան անասունների թվի ավելացում, վորը տանում է դեպի կոլտնտեսութեան շահերի խախտումը, խանգարում է կոլտնտեսային կարգապահութեան ամրապնդմանը: Անհրաժեշտ է կոլտնտեսային կարգապահութեան հետադառն ամրապնդումը և համապատասխան դատարարական աշխատանքի ուժեղացումը կոլտնտեսականների ամբողջ մասնայի մեջ, աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը և ավելի լավ աշխատող կոլտնտեսականների խրախուսումը, ինչպէս

նաև կոլտնտեսութեաններում լայնորեն ոգակների կազմակերպմանն անցնելը: Կարգապահութեանն է՛լ ավելի ամրապնդելու, աշխատանքի արտադրողականութեանը բարձրացնելու և կոլտնտեսութեան՝ յուրաքանչյուր կոլտնտեսականին ընկնող յեկամաբերութեան ավելացման շահերից յեղնելով, ինչպէս նաև արդյունաբերութեան հետադառն գարգացման, յերկրում ապրանքների ավելացման և արդյունաբերական ձեռնարկութեաններին կոլտնտեսականների միջից բանվորական կադրեր մատակարարելու նպատակով, անհրաժեշտ է հասնել այն բանին, վոր կոլտնտեսութեանները սիստեմատիկաբար կոլտնտեսականներին թույլ տան աշխատանքի գնալու արդյունաբերական ձեռնարկութեանները, առաջին հերթին՝ նրանց, ովքեր կոլտնտեսութեանում քիչ են ոգտադրծվում աշխատանքի մեջ, ունեն քիչ աշխուրք և այդ պատճառով ծանրացած են կոլտնտեսութեան վրա:

Յերրորդ հնգամյակի խնդիրներն իրականացնելու համար անհրաժեշտ է լիովին լիկվիդացիայի յենթարկել ֆաշիզմի և ոտարերկրյա կապիտալի լրտեսական-որոցիկիստական-բուխարինական դործակալների հակահեղափոխական վնասարարութեան հետևանքները, բարձրացնել բոլշևիկյան զգաստութեանը՝ կոմունիզմի կառուցման ամբողջ աշխատանքում և միշտ հիշել կուսակցութեան ցուցումն այն մասին, վոր քանի գոյութեան ունի արտաքին կապիտալիստական շրջապատումը, ոտարերկրյա պետութեաններին հետախուզութեանները մեղ մոտ կուղարկեն վնասարարներ, դիվերսանտներ, լրտեսներ ու մարդասպաններ, վորպեսզի փչացնեն, վնաս հասցնեն և թուլացնեն մեր յերկիրը, վորպեսզի խանգարեն կոմունիզմի աճմանը ԽՍՀՄ-ում:

Յերրորդ հնգամյա պլանի մեծ խնդիրների իրականացումն այնքան սերտորեն կապված է բանվորների, գյուղացիների և խորհրդային ինտելիգենցիայի հարադատ շահերի հետ, վոր նրա կատարումն ապահովելը կախված է, ամենից առաջ, մեղանից—կոմունիստներից և վոչ-կուսակցական բոլշևիկներից—դեկավարներից, և մանավանդ աշխատանքը կազմակերպելու ու աշխատավորների կոմունիստական դատարարութեանը բարձրացնելու մեր հմտութեանից: Մեր

բոլորից, ղեկավարներից և շարքային բանվորներից, ծառայողներից և կոլտնտեսականներից պահանջվում է, առաջին հերթին, ղեկավարից վերաբերմունք ղեպի իրենց պարտականությունները, ազնիվ աշխատանք և ոգնություն՝ հետ մնացողներին, վորպեսզի յերրորդ հնգամյա պլանը հաղթանակի, վորպեսզի Խորհրդային Միությունը մի նոր վիթխարի քայլ կատարի կոմունիզմի լիակատար հաղթանակի ուղիով։ Ներկայիս պայմաններում, յերբ ԽՍՀՄ-ում անբաժանելիորեն տիրապետում են տնտեսության սոցիալիստական ձևերը, սոցիալիստական սեփականությունը, աշխատանքի սոցիալիստական կազմակերպումը, յերբ մեր գործի հաջողության համար վճռական նշանակություն է ստանում կոմունիստական դիտակցությունը՝ հողուտ մեր պետություն, ժողովրդի և բոլոր աշխատավորների կատարվող աշխատանքում, — վիթխարի չափերով բարձրանում է խորհրդային ինտելիգենցիայի դերը, ինտելիգենցիայի, վորը կարողանում է բուլչեիկներն աշխատել, բուլչեիկներն պայքարել հանուն աշխատավորների կուլտուրականության և կոմունիստական դիտակցության բարձրացման։ Այժմ, ԽՍՀՄ-ում սոցիալիստական հասարակության քաղաքական ու տնտեսական դիրքերի վերջնական ամրապնդումից հետո, գործը վճռում են արտադրության տեխնիկան յուրացրած կադրերը, գործը վճռում են խորհրդային կուլտուրական ուժերը, վորոնք զլխավորում են աշխատավոր մասսաներին՝ կոմունիզմի լիակատար հաղթանակի համար մղվող նրանց մեծ պայքարում։

Կապիտալիստական յերկրներում հասարակությանն ալեյի ու բալեյի խոր կերպով է մաշում համաշխարհային տնտեսական նոր ճգնաժամը, վորը փողոց է չալրում նոր միլիոնավոր գործազուրկների, ուժեղացնում է աղքատությունն ու հուսահատությունը աշխատավորության՝ կապիտալին ստրուկ մասսայի մեջ։ Կապիտալիզմի բանակում տոն են տալիս ֆաշիստական յերկրները՝ իրենց ներքին արյունոտ տեռորով ու արտաքին իմպերիալիստական ագրեսիայով, վորն արդեն հասցրել է յերկրորդ իմպերիալիստական պատերազմին՝ Յեյրոպայի ու Ասիայի մի շարք յերկրների

մասնակցությամբ և սպառնում է տարածվել ալեյի հեռուն։ Այս ամենը կապիտալիզմի ընդհանուր, անբուժելի ճգնաժամի ուժեղացման, կապիտալիզմի պարագլխային նեխման, նրա կրախի մոտեցման անվիճելի հատկանիշներն են։ Ուստի առաւել պատասխանատու յեն մեր պարտականությունները, առաջին սոցիալիստական հասարակակարգը կառուցողների պարտականությունները, հասարակակարգ, վորն արդեն կարողացել է քաղաքականապես ու տնտեսապես վերջնականապես կանգնել իր սեփական վոտքերի վրա, լի յե ուժով ու հալատով ղեպի իր հաղթանակը, կայտառություն և իրենց մոտալուտ ազատագրման նկատմամբ հալատ և առաջացնում բոլոր յերկրների աշխատավորների մեջ։ Յերրորդ հնգամյա պլանի կատարումը կլինի կոմունիզմի ամենահաղթ ուժի լավագույն վկայությունը կապիտալիզմի դեմ նրա պատմական մրցության մեջ։

ՀամԿ(բ)Կ XVIII համագումարը բոլոր բուլչեիկներից և կոմունիզմի գործին նվիրված բոլոր կառուցողներից պահանջում է անել ամեն ինչ, վորպեսզի բանվորներին, կուլտնտեսականներին, ինտելիգենցիային ե՛լ ալեյի համախրմբենք Լենինի—Ստալինի կուսակցության մեծ դրուշի տակ, պայքարելու համար հանուն յերրորդ հնգամյա պլանի հաղթանակի։

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՄԿ(Բ)Կ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀամԿ(Բ)Կ XVIII համագումարի բանաձևը ընկ.

Ա. Ժգանովի զեկուցման առթիվ

(Ը ն գ ու ն վ ա ծ Ե մ ի ա ձ ա յ ն)

1. ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակը ապահովեց սոցիալիստական եկոնոմիկայի տիրապետությունը: ԽՍՀՄ-ի եկոնոմիկայի բնագավառում կատարված արժատական փոփոխություններին համապատասխան փոխվեց ԽՍՀՄ-ի քնակչությունը դասակարգային կազմը: Սոցիալիստական չինարարության տարիների ընթացքում լիկվիդացիայի յենթարկվեցին բոլոր չահագործող տարրերը՝ կապիտալիստները, վաճառականները, կուլակները, սպեկուլանտները: ԽՍՀՄ-ի աշխատավորները՝ բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան խորը կերպով փոխվեցին սոցիալիստական չինարարության տարիների ընթացքում:

Արժատապես փոխվեց բանվոր դասակարգը, վորը վերածվել է միանգամայն նոր դասակարգի՝ չահագործումից ազատված, սոստեսություն կապիտալիստական սիստեմը վորչեղնչացրած և արտադրության միջոցների սոցիալիստական սեփականություն հաստատած:

Արժատապես փոխվեց գյուղացիությունը, վորը վերածվել է միանգամայն նոր գյուղացիություն՝ ամեն մի չահագործումից ազատված, իր ճնշող մեծամասնությամբ կոլտեսեսային գյուղացիություն հանդիսացող, վորն իր աշխատանքը և իր ունեցվածքը խարսխում է վոր թե մասնավոր տնտեսության, անհատական աշխատանքի ու հեռամնաց տեսնիկայի վրա, այլ կոլեկտիվ սեփականության

վրա, կոչելով աշխատանքի և ժամանակակից տեխնիկա-
յի վրա:

Փոխվեց ինտելիգենցիան, վորն իր մասնաշրջով դարձել
է միանգամայն նոր ինտելիգենցիա՝ իր բոլոր արմատներով
բանվոր դասակարգի և գյուղացիության հետ կապված:
Խորհրդային ինտելիգենցիան—այդ յերեկվա բանվորներն ու
գյուղացիները և բանվորների ու գյուղացիների գավախներն
են, վորոնք առաջ են քաշվել հրամանատարական պոստերի:
Խորհրդային ինտելիգենցիան ծառայում է վոչ թե կապի-
տալիզմին, ինչպես հին ինտելիգենցիան, այլ սոցիալիզմին,
և հանդիսանում է սոցիալիստական հասարակության իրա-
վահավասար անդամը:

Այսպիսով, դասակարգային սահմանադրերը ԽՍՀՄ-ի
աշխատավորների միջև ջնջվում են, վերանում և ջնջվում են
տնտեսական ու քաղաքական հակասությունները բանվոր-
ների, գյուղացիների ու ինտելիգենցիայի միջև: Ստեղծվել
է խորհրդային հասարակության բարոյական—քաղաքական
միասնության հիմքը: Խորհրդային ժողովրդի այդ բարո-
յական—քաղաքական միասնությունն իր փայլուն հաստա-
տումը գտավ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի և միութենական
հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրու-
թյունների ժամանակ կոմունիստների ու անկուսակցական-
ների բյուրի ստեղծման մեջ և այդ բյուրի լիակատար հաղ-
թանակի մեջ: Կուսակցության չուրջն աճել են վոչ—կուսակ-
ցական բոլլեիկներ, առաջավոր բանվորների, գյուղացի-
ների ու ինտելիգենտների, կուսակցության դործի համար
պայքարող ախտիվ ու գիտակից մարտիկների, կուսակցու-
թյան գիծը մասսաների մեջ անցկացնողների բաղձաթիվ
կադրեր:

Այս նոր իրադրություն մեջ հասունացել է կուսակցու-
թյան մեջ նոր անդամների ընդունելության՝ կանոնադրու-
թյամբ նախատեսված պայմանների փոփոխման անհրաժեշ-
տությունը: Կուսակցության կանոնադրության համաձայն
ներկայումս դործող կարգը, ըստ վորի կուսակցության մեջ
ընդունելությունը կատարվում էր չորս զանազան կատեգո-
րիաներով, նայած կուսակցության մեջ ընդունվողի սոցիա-
լական դրությունը, բացահայտորեն չի համապատասխա-

նում ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթանակի հետևան-
քով խորհրդային հասարակության փոփոխված դասակար-
գային ստրուկտուրային: Կուսակցության մեջ ընդունելու-
թյան ժամանակ զանազան կատեգորիաներ և զանազան թեկ-
նածուկան ստաժ սահմանելու կարիքը վերանում է: Այդ
կապակցությամբ, կուսակցության մեջ բոլոր ընդունվող-
ների համար պետք է սահմանվեն ընդունելության միաս-
նական պայմաններ և թեկնածուական միատեսակ ստաժ,
անկախ այն բանից՝ նրանք պատկանում են բանվոր դասա-
կարգին, գյուղացիությանը, թե ինտելիգենցիային:

2. Անհրաժեշտ է կուսակցության անդամների և նրանց
պարտականությունների մասին կանոնադրական դրույթը
լրացնել կուսակցության անդամների իրավունքների մասին
դրույթով, վորոնք համարվում են ինքնալիքյան հասկա-
նալի, բայց կանոնադրության մեջ չեն նշված: Կուսակցու-
թյան կանոնադրության այսպիսի լրացումը համապատաս-
խանում է կուսակցության անդամների ախտիվության աճ-
մանը և բացառիկ նշանակություն ունի կուսակցության
դործի համար նրանց պատասխանատվությունը բարձրաց-
նելու, կուսակցության անդամներին բյուրոկրատիզմի ար-
տահայտություններից պաշտպանելու համար: Կուսակցու-
թյան կանոնադրության 57-րդ պարագրաֆն ասում է, վոր՝
«Կուսակցական քաղաքականության հարցերի ազատ և դոր-
ծարար քննարկումն առանձին կազմակերպություններում
կամ ամբողջ կուսակցության մեջ՝ կուսակցության յուրա-
քանչյուր անդամի անկապտելի իրավունքն է, վորը բղիւում
է ներկուսակցական դեմոկրատիայից»:

Բացի այդ իրավունքից, կանոնադրության մեջ պետք է
հիշատակված լինեն կուսակցության անդամների հետևյալ
իրավունքները.

ա) կուսակցության անդամների իրավունքը՝ կուսակ-
ցական ժողովներում քննադատելու կուսակցության ամեն
մի աշխատողի.

բ) կուսակցության անդամների իրավունքը՝ ընտրելու
և ընտրվելու կուսակցական որդաններում.

գ) կուսակցության անդամների իրավունքը՝ անձնա-
կան մասնակցություն պահանջելու այն բոլոր դեպքերում,

յերբ վերոշում ե կայացվում նրանց զործունեությունը կամ վարքի մասին.

դ) կուսակցության անդամների իրավունքը՝ ամեն մի հարցով ու հայտարարությամբ դիմելու կուսակցական ամեն մի ինստանցիա, ընդհուպ մինչև Համկ(բ)Կ կենտկոմ:

3. Համկ(բ)Կ կանոնադրությամբ նախատեսված են կուսակցության գումաներ, վորոնք անց են կացվում Համկ(բ)Կ կենտկոմի պարբերաբար կայացվող վորոշումներով: Փորձը ցույց ե տվել, վոր այսուհետև անհրաժեշտ ե հրաժարվել կուսակցության մասսայական գումաներից, հետևյալ նկատառումներով.

ա) մասսայական գումաների մեթոդը, վորը մտցվել ե նեպի սկզբում, կապիտալիստական տարրերի աշխուժացման ժամանակաշրջանում, վորպեսդի կուսակցությունը պաշտպանվեր նեպի կապակցությամբ իր շարքերը քայքայված մարդկանց սողոսկելուց, կորցրել ե հողը ներկայիս իրադրության համար, յերբ կապիտալիստական տարրերը լիկվիդացիայի յեն յենթարկված: Բացի դրանից, պրակտիկայում, ինչպես ցույց ե տվել վորձը, մասսայական գումաների մեթոդը բացասում ե դեպի կուսակցության անդամները միակ ճիշտ անհատական մոտեցման հնարավորությունը, փոխարինելով այն դեպի կուսակցության անդամները «մեկ չափանիշով» հախուռն ստանդարտ մոտեցմամբ: Այդ կապակցությամբ մասսայական գումաների ժամանակ տեղի եյին ունենում բազմաթիվ չհիմնավորված վտարումներ կուսակցությունից, իսկ կուսակցության մեջ սողոսկած թշնամական տարրերը գումաներն ոգտադործում եյին ազնիվ աշխատողներին հալածելու ե ծեծկելու համար.

բ) մասսայական գումաների մեթոդը հնարավորություն չի տալիս լրիվ չափով իրականացնելու կուսակցական դեր-քորոշումը դեպի կուսակցության անդամները, դեպի աշխատողներն ու շաղիբ վերաբերմունքի մասին ե պրակտիկայում հաճախ տանում ե դեպի կուսակցության անդամների իրավունքների վտանահարում.

գ) կուսակցության մեջ սողոսկած թշնամական տարրերի վերաբերմամբ, վորոնք իրենց թշնամական դեմքը քողարկում են յերկերեսանիսության ե կուսակցությանը լաբեթու

միջոցներով, մասսայական գումաների մեթոդը դուրս յեկավ թիչ ներգործուն ե նպատակին չհասնող.

դ) մասսայական գումաների մեթոդն իր սուր ծայրով դուրս յեկավ ուղղված գլխավորապես կուսակցության, այսպես կոչված, պասսիվ անդամների դեմ ե հասցնում եր կուսակցությունից նրա ազնիվ ու բարեխիղճ անդամներին վտարելուն, իրր թե նրանց պասսիվության մոտիվներով:

Այս կապակցությամբ կուսակցության պարբերաբար տեղի ունեցող մասսայական գումաներն անհրաժեշտ ե վերացնել, սահմանելով, վոր կուսակցությունը կարող ե սովորական կարգով իր շարքերը մաքրել այնպիսի անձերից, վորոնք իրականում են կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը, կարգապահությունը:

4. Կուսակցությունը կենտկոմի 1937 թվականի փետր-վար-մարտյան պլենումում ե կենտկոմի 1938 թվականի հունվարյան պլենումում դատապարտեց դեպի կուսակցության անդամների բախտի, կուսակցության անդամներին կուսակցությունից վտարելու ե վտարված անդամներին կուսակցության մեջ վերականգնելու հարցը ձևական ու անհոգի-բյուրոկրատական վերաբերմունքի պրակտիկան: Այդ պրակտիկան, ինչպես հայտնի յե, լայնորեն ոգտադործվեց կուսակցության մեջ սողոսկած կարյերիստական տարրերի կողմից, վորոնք աշխատում եյին աչքի ընկնել ե առաջ քաշվել կուսակցությունից յեղած վտարումների միջոցով, ինչպես նաե կուսակցության ներսում դիմակավորված թշնամիների կողմից, վորոնք ճգնում եյին ուսպրեսիայի միջոցների լայն կիրառումով կոտորել կուսակցության ազնիվ անդամներին ե ավելորդ կասկածանք սերմանել կուսակցական շարքերում:

Կենտկոմի 1938 թվականի հունվարյան պլենումը մի շարք միջոցառումներ ընդունեց, վորոնք ապահովում են կուսակցությունից հախուռն վտարումների պրակտիկայի վերացումը, իրոք դիֆերենցիացիայի յենթարկված մոտեցման սահմանում կուսակցությունից վտարելու կամ վտարված անդամներին կուսակցության մեջ վերականգնելու հարցերի լուծման ժամանակ:

Դրան համապատասխան՝ անհրաժեշտ ե կանոնադրու-

թյունը լրացնել մի շարք դրույթներով, վորոնք պետք է՝
ա) ապահովեն ուշադիր մոտեցումը և կուսակցության
անդամին ներկայացված մեղադրանքների հիմնավորության
ուշի-ուշով քննումը.

բ) կուսակցության անդամների իրավունքները պաշտ-
պանեն ամեն տեսակ կամայականությունից.

գ) կուսակցության այն անդամների վերաբերմամբ,
վորոնք չեն զանցանքներ են կատարել, պրակտիկայից
վերացնեն կուսակցությունից վտարում կիրառելը, վորը
կուսակցական պատժի բարձրագույն չափն է հանդի-
սանում:

Ծ. Անհրաժեշտ է վերացնել կանոնադրության պահանջը
կուսակցության մեջ ընդունվող թեկնածուների նկատմամբ,
վորի համաձայն, վորպես նրանց ընդունելության պայման,
գրվում է, կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունն
ընդունելուց և կանոնադրությամբ սահմանված թեկնածու-
կան ստաժն անցնելուց բացի, նաև ծրագրի յուրացումը:

Ընկ. Ստալինը Կենտկոմի 1937 թվականի փետրվար-
մարտյան պլենումում տված զեկուցման մեջ մատնանշեց.

«Կուսակցության ծրագիրը յուրացնելու համար
պետք է իսկական մարքսիստ լինել, ստուգված ու
տեսականորեն պատրաստված մարքսիստ: Յես չգի-
տեմ՝ մեզ մոտ շատ կգտնվեն արդյոք կուսակցու-
թյան այնպիսի անդամներ, վորոնք արդեն յուրաց-
րել են մեր ծրագիրը, դարձել են իսկական մարք-
սիստներ, տեսականորեն պատրաստված և ստուգ-
ված: Յեթե առաջ գնալու լինենք այդ ուղիով, ապա
մենք ստիպված կլինեյինք կուսակցության մեջ թող-
նել միայն ինտելիգենտներին և առհասարակ գիտնա-
կան մարդկանց: Ո՞ւմ է պետք այդպիսի կուսակցու-
թյունը: Մենք ունենք կուսակցության անդամության
մասին ստուգված և բոլոր փորձություններին դիմա-
ցած լենինյան ֆորմուլա: Այդ ֆորմուլայի համա-
ձայն՝ կուսակցության անդամ համարվում է նա, ով
ընդունում է կուսակցության ծրագիրը, մոլծուկ է
անդամավճար և աշխատում է նրա կազմակերպու-
թյուններից մեկում: Ուշադրություն դարձրե՛ք լե-

նինյան ֆորմուլայի մեջ խոսվում է վոր թե ծրագրի
յուրացման մասին, այլ ծրագիրն ընդունելու մասին:
Մրանք յերկու միանգամայն տարբեր բաներ են:
Ապացուցելու կարիք էլ չկա, վոր այստեղ իրավացի
յե լենինը, և վոր թե մեր այն կուսակցական ընկեր-
ները, վորոնք դատարկ տեղը չաղակրատում են ծրա-
գրի յուրացման մասին: Յեւ այդ հասկանալի յե:
Յեթե կուսակցությունը յերեք այն բանից, վոր
կուսակցության անդամ կարող են լինել միայն այն-
պիսի ընկերներ, վորոնք արդեն յուրացրել են ծրա-
գիրը և դարձել են տեսականորեն պատրաստված
մարքսիստներ, ապա նա կուսակցության մեջ չե-
ստեղծի հաղարավոր կուսակցական խմբակներ, հա-
րյուրավոր կուսակցական դպրոցներ, վորտեղ կու-
սակցության անդամներին մարքսիզմ են սովորեցնում
և նրանց ոգնում են յուրացնելու մեր ծրագիրը: Մի-
անգամայն պարզ է, վոր յեթե կուսակցությունն այդ-
պիսի դպրոցներ ու խմբակներ է կազմակերպում կու-
սակցության անդամների մեջ, ապա այդ այն պատ-
ճառով է, վոր նա գիտե, վոր կուսակցության ան-
դամները ղեռ չեն կարողացել յուրացնել կուսակցու-
թյան ծրագիրը, ղեռ չեն կարողացել տեսականորեն
պատրաստված մարքսիստներ դառնալ»:

Այս մոտիվներով անհրաժեշտ է վերացնել կանոնադրու-
թյան հիշյալ պահանջը:

Ծ. Կուսակցության նոր խնդիրները, վորոնք առաջ են
յեկել յերկրի քաղաքական կյանքում կատարված շրջադար-
ձի, ինչ Միության նոր Սահմանադրությունն ընդունելու
կապակցությամբ, կուսակցությունից պահանջեցին կու-
սակցական աշխատանքի պրակտիկայի համապատասխան
վերակառուցում՝ կուսակցության կանոնադրությամբ առա-
ջադրվող ներկուսակցական ղեմակրատիզմի սկզբունքներն
անվերապահորեն ու լիովին կենսագործելու հիման վրա:
Այդ նպատակով կուսակցությունը լիվիդացիայի յենթաբ-
կից ղեմակրատական ցենտրալիզմի հիմունքների խախտու-
մը, վոր տեղի ունեւր կուսակցական աշխատանքի պրակ-
տիկայում, և, կուսակցության կանոնադրությանը համա-

պատասխան, վերահանդեսը կուսակցական կադմակերպությունների ղեկավար օրգանների ընտրականությունը:

Կուսակցությունը կիրառեց նաև մի շարք լրացուցիչ միջոցներ, վորոնք ապահովում են հետևողական դեմոկրատական պրակտիկայի կիրառումը, այն է՝ կոոպտացիայի պրակտիկայի վերացում, կուսակցական օրգանների ընտրությունների ժամանակ ցուցակով քվեարկելու արգելում, անցում բոտ առանձին թեկնածուների քվեարկության, կուսակցության բոլոր անդամների համար թեկնածուներին բացարկելու և վերջիններին քննադատելու անսահմանափակ իրավունքի ապահովում, կուսակցական օրգանների ընտրությունների ժամանակ թեկնածուների փակ (դադարի) քվեարկության սահմանում, պարբերաբար քաղաքային կուսակցական ակտիվի, իսկ մեծ քաղաքներում՝ նաև ռայոնական ակտիվի ժողովների հրավիրման պարտադրության սահմանում:

Կանոնադրությունը պետք է արտացոլի կուսակցության այս նոր միջոցառումները, վորոնք ստուգված են պրակտիկայով, վորոնք ապահովել են քննադատության և խնայաքննադատության հետագա զարգացումը, կուսակցական մասսայի առջև կուսակցական օրգանների պատասխանատվության բարձրացումը, կուսակցական մասսայի ակտիվության աճումը և դրանով իսկ նպաստել են կուսակցության գինմանը՝ քաղաքական ղեկավարման նոր խնդիրների հաջող լուծման համար:

7. Կուսակցության կանոնադրության համաձայն՝ կուսակցական վճիռներն ու վորոշումներն իրադրոծելու (և խորհրդային-տնտեսական օրգաններում ու կուսակցական ստորին կադմակերպությունների կողմից դրանց կատարումն ստուգելու) պրակտիկ աշխատանքի համար մարդկիմներում, յերկրկոմներում, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներում և ՀամԿ(բ)Կ կենտկոմում պետք է գոյություն ունենան ամբողջական արտադրական-ճյուղային բաժիններ, ըստվորում «յուրաքանչյուր արտադրական-ճյուղային բաժնում կենտրոնացվում է տվյալ ճյուղի ամբողջ աշխատանքը, կադմակերպական-կուսակցական աշխատանքը, կադրերի բաշխում ու պատրաստում, ազիտ-մասսայական աշխո-

տանք, արտադրական պրոպագանդա, հսկողություն համապատասխան խորհրդային-տնտեսական օրգանների և կուսակցական կադմակերպությունների կողմից կուսակցական վորոշումները կատարելու վրա»:

Պրակտիկան ցույց է տվել, սակայն, վոր կուսակցական ապարատի այդպիսի կադմակերպումն անբավարար դտնվեց:

Կուսակցության կենտրոնական կադմակերպական խընդիրն անցած ժամանակաշրջանում և ներկայումս յեղել է ումնում է մարդկանց ճիշտ ընտրության և կատարումն ստուգելու խնդիրը: Այդ հարցին բացառիկ նշանակություն երտալիս Լենինը, կուսակցության XI Համագումարում մատնանչելով.

«Մենք յեկանք այն յեղրակացության, վոր դրության մեխը մարդկանց մեջ է, մարդկանց ընտրության մեջ ե... Ընտրեցեք հարկավոր մարդկանց ու ստուգեցեք պրակտիկ կատարումը,—և ժողովուրդն այդ կդնահատի»:

Կուսակցության XVII Համագումարում տված իր գեկուցման մեջ ընկ. Ստալինն ամբողջ ուժով ընդգծեց մարդկանց ճիշտ ընտրության և կատարումն ստուգելու նշանակությունը, ասելով.

«Հաղթությունը յերեք խնըը չի գալիս, այն սովորաբար ուժով են բերում: Կուսակցության գլխավոր գծի ոգտին ընդունված լավ բանաձևերն ու գեկյարացիաները գործի միմիայն սկիզբն են, վորովհետև նրանք նշանակում են միմիայն հաղթելու ցանկություն, և վոչ բուն հաղթությունը: Ճիշտ գիծը տրվելուց հետո, հարցի ճիշտ լուծումը տրվելուց հետո—գործի հաջողությունը կախված է կադմակերպական աշխատանքից, կուսակցության գիծը կենսագործելու համար մղվող պայքարը կադմակերպելուց, մարդկանց ճիշտ ընտրությունից, գեկավար մարմինների վորոշումների կատարումն ստուգելուց: Առանց դրան՝ կուսակցության ճիշտ գիծն ու ճիշտ վորոշումները լուրջ վնաս կրելու ուիակի յեն յենթարկվում: Դեռ ավելին. քաղաքական ճիշտ գիծը տրվելուց հետո կադմակեր-

պաւկան աշխատանքն եւ վճռում ամեն ինչ, այդ թիւում նաեւ հենց իր՝ քաղաքական գծի ճակատագիրը, — նրա իրականացումը կամ վիժումը»:

Փորձը ցույց ե տվել, վոր մեր կազմակերպական աշխատանքի թուլութիւնները՝ մարդկանց ընտրութեան եւ կատարումն ստուգելու ուղղութեամբ՝ մինչեւ այժմ վերացված չեն: Կադրերի ընտրութեան գործի ցրումն արտադրական-ճյուղային բաժինների միջև հասցրեց կազմակերպական աշխատանքի թափի իջեցման, դժվարացրեց աշխատողների անհրաժեշտ տեղաշարժը մեկ ճյուղից մյուսը, մարդկանց առաջնաշումը, նրանց նպատակահարմար ոգտադրածումն այն աշխատամասերում, վորոնք տվյալ մոմենտին հատուկ կարեւորութիւն են ներկայացնում կուսակցութեան համար: Կադրերի ընտրութեան գործի ցրումը կուսակցական ապարատի զանազան արտադրական-ճյուղային բաժիններով մեկ՝ ուղղակի արգելակ ե դարձել կադրերի ընտրութեան ու բաշխման խնդրի հաջող լուծման համար: Այդ խնդիրը պահանջում ե կադրերի գծով կատարվող ամբողջ աշխատանքին ուղղութիւն տալ միասնական կենտրոնից՝ այդ աշխատանքը միասնական ապարատում կենտրոնացնելու միջոցով, վորտեղ պետք ե կենտրոնացված լինեն կադրերի ընտրութեան փորձը, կադրերի ուսումնասիրման գործը, նրանց դասավորման փորձը:

Համկ(բ)Կ Կենտկոմը, հաշվի առնելով նման դրութիւններ, ձեռք առավ մի շարք միջոցներ, կադրերի ընտրութեան գործը կենտրոնացնելով Կուսակցական ղեկավար որդանների բաժնում (Կենտկոմի կուսակցական ղեկավար որդանների բաժին): Մակայն նկատի ունենալով կադրերի պատրաստման ու ընտրութեան գործի առաջնակարգ կարեւորութիւնը եւ այդ աշխատանքի մեծ ծավալը, պետք ե վոր վերակառուցվեր Կուսակցական ղեկավար որդանների բաժինը, աշխատանքի բոլոր ճյուղերում կադրերի գծով կատարվող աշխատանքն առանձնացնելով Կադրերի ինքնուրույն վարչութեան մեջ, իսկ կուսակցական-կազմակերպական ղեկավարման հարցերը՝ հատուկ Կազմակերպական-հրահանգչական բաժնում:

8. Անբավարար գտնվեց նաեւ կուսակցական դիրեկտիվներին կատարման ստուգումը զանազան արտադրական-ճյուղային բաժինների միջև ցրելու պրակտիկան: Այդ աշխատանքը նույնպէս անհրաժեշտ ե կենտրոնացնել մեկ տեղում, դրան համապատասխան փոփոխելով ԿՎՀ-ի գործունեութեան բնույթը: ԿՎՀ-ի կենտրոնական խնդիրը պետք ե դառնա Համկ(բ)Կ Կենտկոմի վորոշումների կատարման վերահսկողութիւնն ուժեղացնելու ե տեղական կազմակերպութեանների աշխատանքի սխտեմատիկ ստուգում կազմակերպելու խնդիրը: Անհրաժեշտ ե սահմանել, վոր ԿՎՀ-ն գործում ե Համկ(բ)Կ Կենտկոմին կից: Այդ կապակցութեամբ վերանում ե ԿՎՀ-ն անմիջականորեն կուսակցութեան Համագումարում ընտրելու անհրաժեշտութիւնը: Կուսակցական վերահսկողութեան Հանձնաժողովը պետք ե ընտրվի Համկ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի պլենումի կողմից ե գործի Համկ(բ)Կ Կենտկոմի ղեկավարութեամբ ու դիրեկտիվներով:

9. Կուսակցական կադրերի տեսական ու քաղաքական հետամնացութիւնը լիկվիդացիայի յենթարկելու խնդիրը, կուսակցութեան անդամներին մարքս-լենինյան թեորիայով զինելու ե բոլշևիզմի տիրապետման խնդիրը պահանջում ե հարկ յեղած մակարդակի բարձրացնել կուսակցական պրոպագանդայի ե ագիտացիայի գործը, Կենտկոմի՝ «Կուսակցական պրոպագանդայի զբաղման մասին» Համկ(բ)Կ պատմութեան համառոտ դասընթացի» լույսընծայման կապակցութեամբ» վորոշմանը համապատասխան:

Համկ(բ)Կ Կենտկոմը պետք ե ունենա պրոպագանդայի ե ագիտացիայի հզոր ապարատ հանձնի Պրոպագանդայի ե ագիտացիայի վարչութեան, վորը կենտրոնացնի ամբողջ աշխատանքը տույզեր ու բանավոր պրոպագանդայի ու ագիտացիայի գծով:

10. Համկ(բ)Կ Կենտկոմի արտադրական-ճյուղային բաժինները պետք ե լիկվիդացիայի յենթարկվեն, բացառութեամբ Գյուղատնտեսական բաժնի, նկատի ունենալով դուրդատնտեսութեան բնագավառում խորհրդային ե կուսակցական կազմակերպութիւնների գործունեութեանը վերահսկելու ու հսկելու խնդրի հատուկ կարեւորութիւնը, ե Դժպ-

րոցներէ բաժնի, վորը պետք է վերահսկման յենթարկի ժողովրդական կրթութեան գործի դրվածքը բոլոր հանրապետութեաններում:

Մարդկոմներում, յերկրկոմներում և աղգային կոմկուսակցութեաններէ Կենտկոմներում պետք է ստեղծվեն հետեւյալ բաժինները՝ կադրերի, պրոպագանդայի և ագիտացիայի, կազմակերպական-հրահանգչական ու գյուղատնտեսական, և պետք է վերացվեն մնացած բոլոր արտադրական-ծրուղային բաժինները:

Շրջկոմներում և քաղկոմներում անհրաժեշտ է ունենալ հետեւյալ բաժինները՝ կադրերի, պրոպագանդայի ու ագիտացիայի և կազմակերպական-հրահանգչական:

Պրոպագանդայի ու ագիտացիայի բաժիններէ և կադրերի բաժիններէ ղեկավարութեանը մարդկոմներում, յերկրկոմներում և աղգային կոմկուսակցութեաններէ Կենտկոմներում պետք է դրվի հատուկ քարտուղարներէ վրա:

11. Սոցիալիստական տնտեսութեան արագ վերելքի, բանվորներէ, դուռացիներէ և ինտելիգենցիայի քաղաքական ու կուլտուրական արագ աճման պայմաններում խիստ բարձրացել է կուսակցական և պետական կյանքի տեմպը: Պետական և կուսակցական գործերի նկատմամբ ղեկավարութեան իրականացնելու, կյանքի կողմից առաջադրվող պահանջներին արագորեն արձագանդելու և հասունացած հարցերը ժամանակին լուծելու համար անհրաժեշտ է կուսակցութեան կենտրոնական կազմակերպութեաններէ դուռութեան ունեցող սխեման—կուսակցութեան Համագումար, Համկ(բ) Կենտկոմ—լրացնել նոր որդանով՝ Համամիութենական կուսակցական կոնֆերենցիայով: Այդ առաւել ևս անհրաժեշտ է, վորովհետեւ կուսակցութեան համագումարներէ միջև ընկած մեծ ժամանակամիջոցը սահմանափակում է կուսակցութեան աշխատողներէ աճած կադրերին, և մանավանդ Համկ(բ) Կենտկոմում, ղեկավար աշխատանքի առաջ քաշելու հնարավորութեանը, իսկ կոնֆերենցիան կուսակցութեանը կկարողանար տալ այդպիսի հնարավորութեան: Այդ կապակցութեամբ հասունացել է կուսակցութեան կենտրոնական կազմակերպութեաններէ սխեման—կուսակցութեան Համագումար, Համկ(բ) Կենտկոմ—կու-

սակցութեան Համամիութենական կոնֆերենցիայով լրացնելու անհրաժեշտութեանը, ըստվորում կոնֆերենցիան գումարվում է վոչ սակաւ, քան տարին մեկ անգամ՝ տեղական կազմակերպութեաններէ ներկայացուցիչներէ, այն հաշվով, վոր կուսակցութեան Համամիութենական կոնֆերենցիայի դիւտար խնդիրը համարվի կուսակցութեան քաղաքականութեան հասունացած հարցերի քննարկումը:

Կուսակցութեան Համամիութենական կոնֆերենցիային հարկավոր է իրավունք վերապահել փոփոխելու Կենտկոմի անդամներէ մի մասին, այսինքն՝ Կենտկոմի կազմից Կենտկոմի այն առանձին անդամներին դուրս հանելու իրավունք, վորոնք չեն ապահովում, վորպէս Կենտկոմի անդամներէ, իրենց վրա դրված պարտականութեաններէ կատարումը և նրանց փոխարինելով ուրիշներով, բայց կուսակցութեան Համագումարի կողմից ընտրված Կենտկոմի կազմի մեկ հինգերորդից վոչ ավելի քանակութեամբ: Կոնֆերենցիան Կենտկոմի անդամներէ կազմը լրացնում է կուսակցութեան Համագումարի կողմից ընտրված թեկնածուներէ թվից և վերջիններէ փոխարեն ընտրում է Կենտկոմի անդամութեան համապատասխան քանակութեամբ նոր թեկնածուներ:

Կոնֆերենցիայի վորոշումները, քաջառութեամբ Կենտկոմի անդամներէ փոփոխման և Կենտկոմի անդամութեան նոր թեկնածուներէ ընտրութեան մասին յեղած վորոշման, վորը Համկ(բ) Կենտկոմի հաստատման կարիքը չի գրում, յենթակա յեն Համկ(բ) Կենտկոմի հաստատմանը: Կոնֆերենցիայի վորոշումները, հաստատված Համկ(բ) Կենտկոմի կողմից, պարտադիր են բոլոր կուսակցական կազմակերպութեաններէ համար: Կոնֆերենցիայի պատգամավորներն ընտրվում են մարդկոմներէ, յերկրկոմներէ և աղգային կոմկուսակցութեաններէ Կենտկոմներէ պլենումներում: Կենտկոմի անդամները, յեթե նրանք պատգամավորներ չեն հանդիսանում ըստ տեղական կազմակերպութեաններէ լիազորութեան, կոնֆերենցիայի աշխատանքներին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

12. Անցած ժամանակաշրջանում կուսակցական-քաղաքական և կուսակցական-կազմակերպական աշխատանքի վերելքի հիման վրա ամրապնդվել են սկզբնական կուսակազմա-

կերպությունները, բարելավվել և նրանց կապը մասսաների հետ, բարձրացել և կոմունիստների ալիանսարդային դերը, բարձրացել և կուսակցական կյանքի մակարդակը: Կուսակցական կազմակերպություններն ալիելի յեն մոտեցել տնտեսական և կուլտուրական շինարարության պրակտիկ հարցերին:

Փորձը ցույց տվեց, Վոր կուսակցական կազմակերպություններին հաջող աշխատանքն ստանձնելիս ևր այնտեղ, վերտեղ սկզբնական կուսակցական կազմակերպությունը կարողացել ևր կուսակցական-քաղաքական աշխատանքը գլուխկցել արտադրական պլանների հաջող կատարման, պետական ապարատի աշխատանքի բարելավման, նոր տեխնիկայի յուրացման, աշխատանքային կարդապահությունն ամրանդելու համար մղվող պայքարի հետ, ստախանովյան շարժումը ծախսելու հետ, նոր կադրեր կուսակցական-տնտեսական աշխատանքի առաջ քաշելու հետ: Յեւ ընդհակառակը, այնտեղ, վերտեղ կուսակցական կազմակերպությունները մի կողմ եյին քաշվել տնտեսությունից, իրենց խնդիրները սահմանափակելով ագիտացիայով, կամ այնտեղ, վերտեղ կուսակցական կազմակերպություններն ստանձնել եյին տնտեսության դեկալարման՝ իրենց վոչ-հատուկ ֆունկցիաներ, փոխարինելով ու դիմադրել անելով տնտեսական որդաններին, այնտեղ աշխատանքն անխուսափելիորեն ընկնում ևր փակուղու մեջ:

Ներկայումս հասունացել և զանազան տիպի սկզբնական կուսակցական կազմակերպությունների խնդիրներն ալիելի ստույգ կերպով վորոշելու անհրաժեշտությունը և մասնավորապես սկզբնական կուսակցական կազմակերպություններին այնպիսի դանազան տիպեր, ինչպես կուսակցական կազմակերպությունն արտադրության մեջ (Փարբիկա, դործարան, խորհտնտեսություն, կոլտնտեսություն) և ժողկոմատի կուսակցական կազմակերպությունը: Արտադրական տիպի (Փարբիկա-դործարանային, խորհտնտեսության, կոլտնտեսության) կուսակցական կազմակերպությունը պետք և իրավունք վերապահվի վերահսկելու ձեռնարկության, խորհտնտեսության կամ կոլտնտեսության դործերի վիճա-

կին: Այդ պետք և հասցնի արտադրության մեջ սկզբնական կուսակցական կազմակերպությունների դերի ու պատասխանատվության ուժեղացմանը: Ինչ վերաբերում և ժողկոմատների կուսակցական կազմակերպություններին, ապա դրանք, սպեցիֆիկ պայմանների շնորհիվ չունենալով վերահսկողության ֆունկցիաներ, պետք և ուժեղացնեն իրենց դերը պետական ապարատի աշխատանքի բարելավման դործում: Ժողկոմատային կուսակցական կազմակերպությունները պարտավոր են ահազանդել այս կամ այն ժողկոմատի աշխատանքի թերություններին մասին, նշել առանձին աշխատողների թերությունները և դրանց մասին հաղորդել Կենտկոմին ու ժողկոմատի ղեկավարներին:

Կուսակցության այն բոլոր անդամները, վորոնք աշխատում են այս կամ այն ժողկոմատում, պետք և միավորվեն համաժողկոմատային կուսակցական կազմակերպության կողմից: Ժողկոմատի սկզբնական կազմակերպության քարտուղարը պետք և հաստատվի ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կողմից:

13. Հաշվի առնելով, վոր համակրողների ինստիտուտը ստեղծվել ևր այն ժամանակաշրջանում, յերբ փակված ևր ընդունելությունը կուսակցության մեջ, ինչպես և նկատի ունենալով, վոր կուսակցությունը հնարավորություն ունի իր շարքերը լրացնելու խորհուրդների, պրոֆիտությունների, կոմյերիտիության, կոոպերացիայի, Պաշը-Ավիաբիմի և աշխատավորության մյուս հասարակական կազմակերպությունների շուրջը միավորված անկուսակցական ակտիվի առաջավոր մասին հաշվին, անհրաժեշտ համարել համակրողների խմբերի վերացումը:

ՀամԿ(բ)Կ XVIII Համագումարը վորոշում և ՀամԿ(բ)Կ կանոնադրության մեջ մտցնել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Վերացնել թեկնածությունից կուսակցության անդամ ընդունելիս դոյություն ունեցող կատեգորիաները և

սահմանել թեկնածությունից կուսակցության անդամ ընդունելու միասնական կարգ բանալորները, դյուղացիների ու ինտելիգենցիայի համար: Սահմանել, վոր կուսակցության մեջ ընդունվում են 18 տարեկան հասակին հասած անձեր: Կուսակցության մեջ բոլոր ընդունվողները պարտավոր են ներկայացնել յերեք տարվա կուսակցական ստաժ ունեցող յերեք կուսանդամի յերաշխալորություններ, վորոնք ճանաչում են նրանց վոչ պակաս քան մեկ տարի համատեղ աշխատանքից: Այլ կուսակցություններից յերածների համար պահանջել ներկայումս դործող կանոնադրական կանոնները: Վերացնել կուսակցության մեջ մտնողներից արվող կանոնադրական պահանջը այն հասարակական կազմակերպությունից կարծիք ներկայացնելու անհրաժեշտության մասին, վորտեղ նրանք աշխատել են կամ աշխատում են: Կուսակցության մեջ ընդունելու մասին սկզբնական կուսակցական կազմակերպության վորոշումն ուժի մեջ է մտնում չըջկոմի կամ քաղկոմի կողմից այն հաստատվելուց հետո: Կուսակցության մեջ ընդունելու հարցը քննարկելիս յերաշխալորդների ներկայությունը պարտադիր չէ:

2. Կուսակցության անդամների և նրանց պարտականությունների վերաբերյալ բաժինը լրացնել կուսակցության անդամների իրավունքների մասին կետով, մտցնելով նրա մեջ.

ա) կուսակցության անդամների իրավունքը՝ կուսակցական ժողովներում քննադատելու կուսակցության ամեն մի աշխատողի.

բ) կուսակցության անդամների իրավունքը՝ ընտրելու և ընտրվելու կուսակցական որդաններում.

գ) կուսակցության անդամների իրավունքը՝ անձնական մասնակցություն պահանջելու այն բոլոր դեպքերում, յերբ վորոշում է կայացվում նրանց դործունեյության կամ վարքի մասին.

դ) կուսակցության անդամների իրավունքը՝ ամեն մի հարցով ու հայտարարությամբ ղեմելու կուսակցական ամեն մի ինստանցիա, ընդհուպ մինչև ՀամԿ(Բ) կ Կենտկոմ:

3. Վերացնել կուսակցության պարբերական մաստայա-

կան դասմները, սահմանելով, վոր կուսակցությունը կարող է սովորական կարգով մաքրել իր շարքերն այնպիսի անձերից, վորոնք խախտում են կուսակցության ծրագիրը, կուսակցության կանոնադրությունը, կուսակցության կարգապահությունը:

4. Սահմանել, վոր կուսակցությունից վտարելու կամ վտարվածներին կուսակցության անդամների իրավունքներում վերականգնելու վերաբերյալ հարցերի լուծման ժամանակ պետք է ապահովված լինի առավելագույն զգուշությունն ու ընկերական հոգատարությունը և կուսակցության անդամին ներկայացված մեղադրանքների հիմնավորվածության ուշի-ուշով քննումը, և վոր մանր դանցանքների համար (ժողովին չներկայանալը, անդամավճարները ժամանակին չմուծելը և այլն) պետք է կիրառվեն կուսակցական դատարարական ու ներդործման՝ կանոնադրությամբ նախատեսված միջոցներ, և վոչ թե վտարում կուսակցությունից, վորը կուսակցական պատժի բարձրագույն չափն է:

5. Սկզբնական կուսակցական կազմակերպության վորոշումը՝ կուսակցությունից վտարելու մասին, ինչպես նաև վտարվածներին կուսակցության անդամների իրավունքներում վերականգնելու մասին՝ ուժ է ստանում միմիայն այն դեպքում, յեթե այն հաստատվում է մարզկոմի, յերկրկոմի, ազգային կոմկուսակցության Կենտկոմի կողմից:

Մինչև կուսակցությունից վտարելու մասին վորոշումը մարզկոմի, յերկրկոմի, ազգային կոմկուսակցության Կենտկոմի կողմից հաստատվելը կուսակցական տոմսը մնում է կուսակցության անդամի ձեռքում, և նա իրավունք ունի հաճախելու կուսակցական ժողովներին: Կուսակցության վտարված անդամների մասին մարզկոմը, յերկրկոմը, ազգային կոմկուսակցության Կենտկոմը հրապարակում են տեղական կուսակցական մամուլում՝ մատնանշելով վտարման պատճառները, ինչպես նաև հրապարակում են սխալ կերպով վտարվածներին վերականգնելու մասին:

6. Կուսակցությունից վտարվածների ապելյացիաները պետք է կուսակցական համապատասխան որդանների կող-

միջ ընտելության առնվեն վոչ ուշ, քան յերկշաբաթյա ժամ-
կեսում:

7. Վերացնել թեկնածուներին ներկայացվող կանոնա-
դրական պահանջը, վորի համաձայն այն ընկերները, վո-
րոնք անցել են թեկնածուական ստաժը, ընդունում են կու-
սակցութեան ծրագիրը և յենթարկվում են նրա կանոնա-
դրութեանն ու կարգապահութեանը, այնուամենայնիվ չեն
կարող համարվել կուսակցութեան անդամ, մինչև վոր
նրանք չյուրացնեն կուսակցութեան ծրագիրը, այսինքն,
մինչև վոր նրանք չդառնան մարքսիստորեն կրթված կու-
սակցականներ:

II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

8. Կուսակցութեան անդամութեան թեկնածուների վե-
րաբերյալ բաժինը համապատասխանեցնել կուսակցութեան
անդամների վերաբերյալ բաժնին (ընդունելութեան կառու-
գործիաների վերացումը):

9. Սահմանել բանվորների, գյուղացիների և ինտելի-
գենցիայի համար ընդհանուր թեկնածուական ստաժ մեկ
տարի ժամկետով:

10. Մյլ կուսակցութեաններէց յեւածների համար պահ-
պանել ներկայումս դործող կանոնադրական կանոնները:

III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

11. Կանոնադրութեան մեջ մտցնել հետևյալ լրացուցիչ
դրույթները, վորոնք բղխում են կուսակցութեան մեջ հե-
տևողական զեմոկրատական պրակտիկա կիրառելու և զե-
մոկրատական ցենտրալիզմի հիմունքները մինչև վերջը իրա-
կանացնելու խնդիրներից.

ա) արգելել կուսակցական որդանների ընտրութեաննե-
րի ժամանակ ցուցակով քվեարկութեանը: Քվեարկութեան-
նը կատարել ըստ առանձին թեկնածութեանների, միաժա-
մանակ կուսակցութեան բոլոր անդամների համար ապահո-

վելով թեկնածուների բացարկման և վերջիններիս ընտա-
ղատութեան անսահմանափակ իրավունք.

բ) սահմանել կուսակցական որդանների ընտրութեան-
ների ժամանակ թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկու-
թեան:

12. Հաշվի առնելով կուսակցական ակտիվի քաղաքա-
կան հատուկ նշանակութեանը կուսակցութեան կյանքում,
կանոնադրութեանը լրացնել քաղաքային կազմակերպու-
թեանների ակտիվի վերաբերյալ հետևյալ կետով.

Անհրաժեշտ համարել, վորպեսզի առանց բացառութեան
բոլոր հանրապետական, յերկրամասային ու մարզային
կենտրոններում, ինչպես նաև բոլոր շատ թե քիչ խոշոր
արդյունաբերական կենտրոններում, անպայմանորեն հրա-
վիրվեն քաղաքային կուսակցական կազմակերպութեանների
ակտիվի ժողովներ՝ կուսակցութեան և կառավարութեան
կարևորագույն վորոշումները ընտրական համար, վորպես-
զի ակտիվի ժողովները դումարվեն վոչ թե պարագի և այդ
վորոշումներին ձևականորեն-հանդիսաւոր կերպով հաւա-
նութեան տալու համար, այլ դրանք իսկապես ընտրակերու
համար, վորպեսզի մեծ կենտրոններում դումարվեն վոչ
միայն քաղաքային, այլև ուսյունական կուսակցական ակտի-
վի ժողովներ:

13. Լիկվիդացիայի յենթարկել ՀամԿ(բ)ի Կենտկոմում
աբտադրական-ճյուղային բաժինները, բացառութեամբ Գյու-
ղատնտեսական բաժնի և Դպրոցների բաժնի:

ՀամԿ(բ)ի Կենտկոմում ունենալ հետևյալ վարչութեան-
ները և բաժինները.

ա) Կադրերի վարչութեան,

բ) Պրոպագանդայի և ագիտացիայի վարչութեան,

գ) Կազմակերպական-հրահանգչական բաժին,

դ) Գյուղատնտեսական բաժին,

յե) Դպրոցների բաժին:

Մարդկումներում, յերկրկումներում և ազդային կամկու-
սակցութեանների Կենտկոմներում ստեղծվում են.

ա) Կադրերի բաժին,

բ) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին,

գ) Կազմակերպական-հրահանգչական բաժին,

դ) Գյուղատնտեսական բաժին:

Քաղկոմներում և շրջկոմներում ստեղծվում են.

ա) Կադրերի բաժին,

բ) Պրոպագանդայի և ագիտացիայի բաժին,

գ) Կազմակերպական-հրահանգչական բաժին:

Շրջկոմներում, քաղկոմներում, ոկրուգկոմներում, մարզկոմներում, յերկրկոմներում և աղքային կոմկուսակցությունների կենտկոմներում ունենալ ռազմական բաժիններ, վորոնց վրա պարտականություն է դրվում ողնել ռազմական որդաններին՝ զինապարտների հաշվառման դրվածքի, զորակոչի կազմակերպման, պատերազմի դեպքում զորահավաքի գործում, հակառակային պաշտպանություն կազմակերպման գործում և այլն:

14. Ի փոփոխումն գոյություն ունեցող կանոնադրական կարգի սահմանել, վոր կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովն ընտրվում է կենտկոմի պլենումի կողմից և գործում է Համկ(բ)ի կենտկոմի ղեկավարությամբ:

Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովը՝

ա) վերահսկողության է յենթարկում Համկ(բ)ի կենտկոմի ղերեկտիվների կատարումը խորհրդային-տնտեսական որդանների և կուսակցական կազմակերպությունների կողմից.

բ) ստուգում է տեղական կուսակցական կազմակերպությունների աշխատանքը.

գ) պատասխանատվության է յենթարկում Համկ(բ)ի ծրագիրն ու կանոնադրությունը և կուսակցական կարգապահությունը խախտելու համար հանցավորներին:

15. Պրոպագանդայի ու ագիտացիայի բաժինների և կադրերի բաժինների ղեկավարությունը մարզկոմներում, յերկրկոմներում և աղքային կոմկուսակցությունների կենտկոմներում պետք է դրվի հատուկ քարտուղարների վրա:

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16. Համկ(բ)ի կանոնադրությունը լրացնել Համախուսական կուսակցական կոնֆերենցիայի մասին հետևյալ դրույթներով.

ա) Համախուսական կոնֆերենցիան գումարվում է տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ կուսակցություն քաղաքականություն հասունացած հարցերը քննարկելու համար.

բ) Համախուսական կոնֆերենցիան գումարվում է վոչ սակավ, քան տարին մեկ անգամ:

գ) Համախուսական կոնֆերենցիայի պատգամավորներն ընտրվում են մարզկոմների, յերկրկոմների, աղքային կոմկուսակցությունների կենտկոմների պլենումներում.

դ) Համախուսական կոնֆերենցիայի պատգամավորների ընտրության կարգը և ներկայացուցչության նորմաները սահմանվում են Համկ(բ)ի կենտկոմի կողմից.

յե) Համախուսական կոնֆերենցիային իրավունք է վերապահվում փոխելու կենտկոմի անդամներին մի մասին, այսինքն՝ իրավունք՝ կենտկոմի կազմից հանելու կենտկոմի այն առանձին անդամներին, վորոնք չեն ապահովում իրենց՝ վորպես կենտկոմի անդամներին՝ պարտականությունների կատարումը, և նրանց փոխարինել ուրիշներով, բայց կուսակցության համադրումարի կողմից ընտրված կենտկոմի կազմի մեկ հինգերորդից վոչ ավելի քանակությամբ: Համախուսական կոնֆերենցիան կենտկոմի անդամների կազմը լրացնում է կուսակցության Համադրումարի կողմից ընտրված թեկնածուների թվից և վերջիններին՝ փոխարենն ընտրում է կենտկոմի անդամության՝ համապատասխան թվով նոր թեկնածուներ.

զ) Համախուսական կոնֆերենցիայի վորոշումները, քացառությամբ կենտկոմի անդամների փոփոխման և կենտկոմի անդամության նոր թեկնածուների ընտրության մասին յեղած վորոշման, վորը Համկ(բ)ի կենտկոմի հաստատման կարիքը չի զգում, յենթակա յեն Համկ(բ)ի կենտկոմի հաստատմանը: Համախուսական կոնֆերենցիայի վորոշումները, հաստատված Համկ(բ)ի կենտկոմի կողմից, պարտադիր են կուսակցական բոլոր կազմակերպությունների համար:

է) կենտկոմի անդամները, յեթե նրանք պատգամավորներ չեն ըստ տեղական կազմակերպությունների լիազորության, Համախուսական կոնֆերենցիայի աշխատանքին

րին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

17. Փոխել ղեկավարումն ունեցող կանոնադրական կարգը, վերջ համաձայն խորհրդային Վերահսկողություն Հանձնաժողովը նշվում է կուսակցության Համադրման կողմից, այսուհետև սահմանելով, վոր խորհրդային Վերահսկողություն Հանձնաժողովի կազմավորումը պետք է վերաբերի խորհրդային օրենքների իրավասությունը:

V. ՄԱՐԶԿՈՄՆԵՐԻ, ՔԱՂԿՈՄՆԵՐԻ, ՇՐՋԱԿՈՄՆԵՐԻ ՔԱՐՏՈՂԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՈՒ ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՍՏԱԺԻ ՄԱՍԻՆ

18. Կուսակցական աշխատողների նոր կադրեր կուսակցական ղեկավար աշխատանքի առաջ քաշելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով, ի փոխարեն կանոնադրության համապատասխան պարագրաֆների, կուսակցական ստաժ սահմանել՝ մարդկաների, յերկրկրկումների, աղագյին կոմկուսակցությունների Կենտկոմների քարտուղարների համար 12 տարվա փոխարեն առնվազն 5 տարի, քաղկոմների քարտուղարների համար 10 տարվա փոխարեն առնվազն 3 տարի, շրջկոմների քարտուղարների համար 7 տարվա փոխարեն առնվազն 3 տարի և սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարների ու ցեխային կուսկազմակերպիչների համար առաջին դեպքում առնվազն 3 տարվա, իսկ յերկրորդ դեպքում առնվազն 2 տարվա ստաժի փոխարեն սահմանել առնվազն մեկ տարվա կուսակցական ստաժ:

Ոկրոզներ, նախատորմների և բանակների քաղվարչությունների պետերի համար պարտադիր համարել 10 տարվա փոխարեն 5 տարվա կուսակցական ստաժը և ղեկիչիաների ու բրիգադների քաղրաժինների պետերի համար՝ 6 տարվա փոխարեն 3 տարվա կուսակցական ստաժը:

VI. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍՍԱՅԻՆ, ՄԱՐԶԱՅԻՆ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

19. Սահմանել, վոր մարդկամներում, յերկրկումներում և աղագյին կոմկուսակցությունների Կենտկոմներում պետք է լինի 4—5 քարտուղար, այդ թվում՝ առաջին քարտուղար, յերկրորդ քարտուղար, քարտուղար կադրերի գծով և քարտուղար պրոպագանդայի գծով:

VII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԿՐՈՒԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

20. Ոկրոզային կուսակցական կազմակերպություններին տալ կանոնադրական իրավունքներ՝ Համկ(բ)Կ կանոնադրությունը լրացնելով համապատասխան դրույթով:

VIII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ (ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

21. Սահմանել, վոր քաղաքային-շրջանային կոմիտեյի պլենում գումարվում է վոչ սակավ քան մեկ ու կես ամիսը մեկ անգամ:

IX. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԿՈՒՍԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

22. Ռազմա-Ծովային Նախատորմի Ժողկոմատ ստեղծվելու կապակցությամբ Կարմիր Բանակի կուսակցական կազմակերպությունների մասին կանոնադրական դրույթը տարածել նաև Ռազմա-Ծովային Նախատորմի կուսկազմապությունների վրա, սահմանելով, վոր Ռազմա-Ծովային Նախատորմի Քաղաքական Վարչությունը աշխատում է Համկ(բ)Կ Կենտկոմի Ռազմա-Ծովային Բաժնի իրավունքներով:

X. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

23. Արտադրական ձեռնարկություններին, այդ թվում խորհանտեսություններին, կոտնտեսություններին և ՄՏԿ-ներին սկզբնական կուսակցական կազմակերպությունների դերը և ձեռնարկությունների աշխատանքի վիճակի համար նրանց պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով այդ կազմակերպություններին տալ ձեռնարկության ազմի-նիստարացիայի աշխատանքի վերահսկողության իրավունք:

Ժողկոմատային կուսակցական կազմակերպությունները, վորոնք, խորհրդային հիմնարկներին աշխատանքի հատուկ պայմաններին շնորհիվ, վերահսկողության ֆունկցիաներից ուղտվել չեն կարող, պարտավոր են ահադանդել հիմնարկի աշխատանքի մեջ յեղած թերությունների մասին, նշել ժողկոմատի ու նրա առանձին աշխատողների աշխատանքի թերությունները և իրենց նյութերն ու նկատառումներն ուղարկել ՀամԿ(Բ)Կ Կենտկոմ և Ժողկոմատի ղեկավարներին:

Ժողկոմատային կուսակցական կազմակերպությունների քարտուղարները հաստատում են ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի կողմից:

Ժողկոմատի կենտրոնական ապարատի բոլոր կոմունիստ աշխատողները մտնում են մեկ համաժողկոմատային կուսակցական կազմակերպության մեջ:

24. Ի փոփոխումն դոյություն ունեցող դրույթի, սկզբնական կուսակցական կազմակերպությունների ընտրովի որդաններն այսուհետև անվանել վոչ թե կոմիտեներ, այլ բյուրոներ (այս-ինչ կուսակցական կազմակերպության բյուրո):

25. Սկզբնական կուսակազմակերպություններին բյուրոներն ստեղծվում են կուսակցության առնվազն 15 անդամ ունեցող կուսակազմակերպություններում:

26. Կուսակցության անդամների արագ աճեցման և նրանց կոչելտիվ ղեկավարության վոգով դաստիարակելու նպատակով, կուսակցության առնվազն 15, բայց 100-ից վոչ

ավելի անդամ ունեցող ցեխային կուսակցական կազմակերպություններին իրավունք տալ ընտրելու ցեխային կուսակցական կազմակերպության բյուրո՝ կազմված 3-ից մինչև 5 մարդուց, իսկ կուսակցության 100-ից ավելի անդամ ունեցող ցեխային կուսակազմակերպություններին՝ 5-ից մինչև 7 մարդուց:

27. Սահմանել, վոր այն սկզբնական կուսակցական կազմակերպություններում, վորոնք ունեն 100 կոմունիստից պակաս, կարող են ստեղծվել կուսակցական խմբեր՝ ըստ ձեռնարկության, բրիգադների, ագրեգատների և այլն:

28. Խորոք ձեռնարկություններում ու հիմնարկներում, վորոնք ունեն կուսակցության 500 անդամից ու թեկնածու-ից ավելի, կարող են, յուրաքանչյուր առանձին դեպքում ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի թույլտվությամբ, ստեղծվել կուսակցության գործարանային կոմիտեներ, այդ ձեռնարկությունների ցեխային կուսակազմակերպություններին տալով սկզբնական կուսակցական կազմակերպության իրավունքներ:

XI. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

29. ՀամԿ(Բ)Կ կանոնադրությունը լրացնել կուսակցության և կոմյերիտմիության մասին հետեյալ դրույթներով.

ա) ՀամԼԿՅԵՄ-ն ամբողջ աշխատանքը կատարում է ՀամԿ(Բ)Կ-ի անմիջական ղեկավարությամբ: ՀամԼԿՅԵՄ Կենտկոմը հանդիսանալով կոմյերիտմիության ղեկավար որգանը, անմիջականորեն յենթարկված է ՀամԿ(Բ)Կ Կենտկոմին: ՀամԼԿՅԵՄ տեղական կազմակերպությունների աշխատանքին ուղղություն են տալիս և նրան վերահսկում են համապատասխան հանրապետական, յերկրամասային, մարզային, քաղաքային ու շրջանային կուսակցական կազմակերպությունները:

բ) ՀամԼԿՅԵՄ այն անդամները, վորոնք հանդիսանում են կուսակցության անդամներ կամ թեկնածուներ, կոմյերիտմիությունից դուրս են գալիս կուսակցության մեջ ընդունվելու մոմենտից, յեթե նրանք ղեկավար պոստեր չեն դրավում կոմյերիտական կազմակերպություններում:

դ) ՀամԼԿՅԵՄ-ը կուսակցութեան ակտիվ ոգնականն է ամբողջ պետական ու տնտեսական շինարարութեան մեջ: Կոմյերիտական կազմակերպութիւնները պետք է իրակա- նութ լինեն կուսակցական դերեկտիւների ակտիվ կիրառող- ները սոցիալիստական շինարարութեան բոլոր բնագավառ- ներում, իսկ այնտեղ, վերտեղ չկան սկզբնական կուսակցա- կան կազմակերպութիւններ,—պետք է լիակատար պատաս- խանատուութիւն կրեն այդ դերեկտիւների կենսադործման համար:

դ) Կոմյերիտական կազմակերպութիւնները լայն նա- խաձեռնութեան իրավունք ունեն ձեռնարկութեան, կոլտըն- տեսութեան, խորհրդատեսութեան, հիմնարկի աշխատանքի այն բոլոր հարցերի քննարկման և դրանք համապատասխան կազմակերպութիւնների առջև դնելու ասպարեղում, վո- բոնք կապիւած են նրանց գործունեութեան մեջ յեղած թե- րութիւնների վերացման խնդիրների և աշխատանքի բարե- լաւման գործում սոցիալիստական մրցակցութիւն ու հար- վածայնութիւն կազմակերպելու, մասսայական կամպանիա- ներ անցկացնելու և այլնի միջոցով նրանց անհրաժեշտ ող- նութիւն ցույց տալու խնդիրների հետ:

ԱՌԱՆՁԻՆ ՎՈՐՈՇՈՒՄ

Այն անձերը, վոբոնք կուսակցութեան թեկնածու յեն ընդունւել մինչև XVIII համագումարը, թեկնածուական ստաժն անցնում են ընդհանուր հիմունքներով, այսինքն՝ մեկ տարի ժամկետով:

20 մարտի 1939 թ.

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՍԵԿՑԻԱ

(Ը ն դ ու ն վ ա ծ է մ ի ա ձ ա յ ն)

Հ ա մ Կ (բ) Կ XVIII հ ա մ ա գ ու մ ա ր ի կ ո ղ մ ի ց)

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկներ) կուսակցութիւնը, վորը հանդիսանում է Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիան, ԽՍՀ Միութեան բանվոր դասա- կարգի առաջավոր, կազմակերպւած ջոկատն է, նրա դա- սակարգային կազմակերպութեան բարձրագույն ձևը: Կու- սակցութիւնն իր աշխատանքում ղեկավարւում է մարք- սիզմ-լենինիզմի թեորիայով:

Կուսակցութիւնն իրականացնում է բանվոր դասակար- գին, գյուղացիութեան, ինտելիգենցիային,—ամբողջ խոր- հրդային ժողովրդին ղեկավարելու գործը բանվոր դասա- կարգի ղեկավարութեան ամրապնդման համար, սոցիալիս- տական կարգի ամրապնդման ու դարգացման համար, կո- մունիզմի հաղթանակի համար մղւող պայքարում:

Կուսակցութիւնը հանդիսանում է աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական կազ- մակերպութիւնների ղեկավարող կորիզը և աղահովում է կոմունիստական հասարակութեան հաջող կառուցումը:

Կուսակցութիւնը հանդիսանում է միասնական մարտա- կան մի կազմակերպութիւն, չադկապւած դիտակցական կարգապահութեամբ, վորը հավասարապես պարտադիր է կուսակցութեան բոլոր անդամների համար: Կուսակցու- թիւնն ուժեղ է իր համախմբւածութեամբ, կամքի միա-

նույն ժամը, դործողությունների միասնությամբ, վորոնք անհամատեղելի յեն ծրագրից ու կանոնադրությունից շեղվելու, կուսակցական կարգապահությունը խախտելու, ֆրակցիոն խմբավորումների, յերկերեսանիության հետ: Կուսակցությունն իր շարքերը մաքրում է այն անձերից, վորոնք խախտում են կուսակցության ծրագիրը, կուսակցության կանոնադրությունը, կուսակցության կարգապահությունը:

Կուսակցությունն իր անդամներից պահանջում է ալիքով ու անձնվեր աշխատանք՝ կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունն իրականացնելու, կուսակցության և նրա որդանների բոլոր վորոշումները կատարելու, կուսակցության շարքերի միասնությունն ապահովելու և ինչպես ԽՍՀՄ աղ-դությունների աշխատավորների միջև, այնպես էլ աշխարհի բոլոր յերկրների սրբուխտարների հետ յեղբայրական, ինտերնացիոնալ հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ:

I

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Կուսակցության անդամ է համարվում ամեն վոր, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում է նրա կազմակերպություններից մեկի մեջ, յենթարկվում է կուսակցության վորոշումներին և մոծում է անդամավճար:

2. Կուսակցության անդամը պարտավոր է.

ա) անդուլ աշխատել իր գիտակցականությունը բարձրացնելու վրա, մարքսիզմ-լենինիզմի հիմունքները յուրացնելու վրա.

բ) խստադույն կերպով պահպանել կուսակցական կարգապահությունը, ալիքով կերպով մասնակցել կուսակցության և յերկրի քաղաքական կյանքին, պրակտիկայում կերպով կուսակցության քաղաքականությունը և կուսակցական որդանների վորոշումները.

գ) լինել աշխատանքային և սեփական կարգապահության պահպանման որինակ, տիրապետել իր դործի տեխնիկային, անընդհատ բարձրացնելով իր արտադրական, գործնական վորակավորումը.

դ) որը-որին ամրապնդել կապը մասսաների հետ, ժամանակին արձագանգել աշխատավորների հարցումներին ու կարիքներին, պարզաբանել անկուսակցական մասսաներին կուսակցության քաղաքականության ու վորոշումներին իմաստը:

3. Կուսակցության անդամն իրավունք ունի.

ա) մասնակցելու կուսակցական քաղաքականության պրակտիկ հարցերի աղատ ու դործարար քննարկմանը կուսակցական ժողովներում կամ կուսակցական մամուլում.

բ) կուսակցական ժողովներում քննադատելու կուսակցության ամեն մի աշխատողի.

գ) ընտրելու և ընտրվելու կուսակցական որդաններում.

դ) պահանջելու անձնական մասնակցութուն այն բոլոր գեպքերում, յերբ վորոշում է կայացվում նրա դործունեյության կամ վարքի մասին.

յե) ամեն մի հարցով ու հայտարարությամբ դիմելու կուսակցական ամեն մի ինստանցիա, ընդհուպ մինչև Համ. Կ(բ) Կենտկոմ:

4. Կուսակցության անդամ ընդունելը կատարվում է բացառապես անհատական կարգով: Նոր անդամներ ընդունվում են այն թեկնածուների թվից, վորոնք անցել են սահմանված թեկնածուական ստաթ: Կուսակցության անդամ ընդունվում են գիտակից, ալիքով և կոմունիզմի գործին նվիրված բանվորները, գյուղացիներն ու ինտելիգենտները: Կուսակցության մեջ ընդունվում են 18 տարեկան հասակին հասած անձերը:

Թեկնածուներից կուսակցության անդամ ընդունելու կարգը.

ա) Կուսակցության անդամ ընդունվողները ներկայացնում են կուսակցության յերեք անդամների յերաշխավորություն, վորոնք ունեն առնվազն յերեք տարվա կուսակցական ստաթ և ճանաչում են նրանց վրչ պահատ քան մեկ տարվա համատեղ աշխատանքից:

Ծանոթություն առաջին.— Կոմսոմոլից կուսակցության անդամ ընդունելիս Համ. ԿԵՅՄ չըջանային կոմիտեյի յերաշխավորությունը հավասարեցվում է կուսակցության մեկ անդամի յերաշխավորության:

Ծանոթութիւն յերկրորդ. — ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի անդամները և անդամութեան թեկնածուները յերաշխափորութեանից ձեռնպահ են մնում:

բ) Կուսակցութեան մեջ ընդունելու հարցը քննվում և վճռվում է սկզբնական կուսակցական կազմակերպութեան ընդհանուր ժողովի կողմից, վորի վորոշումն ուժի մեջ է մտնում չրջկոմի, իսկ այն քաղաքներում, վորտեղ չկա ռայոնական բաժանում, — կուսակցութեան քաղկոմի հաստատումից հետո:

Կուսակցութեան մեջ ընդունելու հարցը քննելիս յերաշխափորողների ներկայութեանը պարտադիր չէ:

դ) Յերիտասարդութեանը, մինչև 20 տարեկանը ներառյալ, կուսակցութեան մեջ ընդունվում է միայն Համ. ԼԿՅԵՄ-ի միջոցով:

դ) Այլ կուսակցութեաններէից յերաժնեքը կուսակցութեան անդամ ընդունվում են բացառիկ դեպքերում և կուսակցութեան հինգ անդամների յերաշխափորութեամբ, վորոնցից յերեքը՝ տաս տարեկան կուսակցական ստաժով և յերկուսը՝ մինչհեղափոխական կուստաժով, — վոչ այլ կերպ, քան սկզբնական կուսակազմակերպութեան միջոցով, անպայման ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի հաստատումով:

5. Յերաշխափորողները պատասխանատուութեան են կրում իրենց յերաշխափորութեանների լափորակութեան համար:

6. Թեկնածուներից կուսակցութեան անդամ ընդունվողների կուստաժը հաշվվում է այն ուրից, յերբ համապատասխան սկզբնական կուսակցական կազմակերպութեան ընդհանուր ժողովը վորոշում է ընդունում տվյալ ընկերօջը կուսակցութեան անդամ հաստատելու մասին:

7. Մի կազմակերպութեան ամեն մի անդամ մի ուրիշ կազմակերպութեան աշխատանքի չրջանը փոխադրվելու դեպքում վերջինիս կողմից մտցվում է իր անդամների թվի մեջ:

Ծանոթութիւն. — Կուսակցութեան անդամների մի կազմակերպութեանից մյուսը փոխադրվելը կատարվում է ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի կողմից սահմանված կանոնների համաձայն:

8. Կուսակցութեան այն անդամներն ու թեկնածուները,

վորոնք յերեք տմտեա ընթացքում առանց հարգելի պատճառների չեն վճարել անդամավճարները, համարվում են կուսակցութեանից դուրս մնացած, վորի մասին սկզբնական կուսակցական կազմակերպութեան ընդունում է համապատասխան վորոշում, վորը հաստատվում է կուսակցութեան չրջկոմի կամ քաղկոմի կողմից:

9. Վորեւե մեկին կուսակցութեանից վտարելու հարցը վորոշում է այն սկզբնական կուսակցական կազմակերպութեան ընդհանուր ժողովը, վորի անդամն է հանդիսանում վտարվողը, և հաստատվում է կուսակցութեան չրջկոմի կամ քաղկոմի կողմից: Կուսակցութեանից վտարելու մասին չրջկոմի կամ քաղկոմի վորոշումն ուժ է ստանում միայն այն դեպքում, յեթե այն հաստատված է կուսակցութեան մարդկոմի, յերկրկոմի կամ Միութենական հանրապետութեան կոմկուսակցութեան Կենտկոմի կողմից:

10. Մինչև կուսակցութեանից վտարելու վերաբերյալ վորոշումը մարդկոմի, յերկրկոմի կամ Միութենական հանրապետութեան կոմկուսակցութեան Կենտկոմի կողմից հաստատվելը, կուսակցական տոմսը մնում է կուսակցութեան անդամի ձեռքին, և նա իրավունք ունի հաճախելու կուսակցական դռնփակ ժողովներին:

Կուսակցութեան վտարված անդամների մասին մարդկոմը, յերկրկոմը, Միութենական հանրապետութեան կոմկուսակցութեան Կենտկոմը հրապարակում է տեղական կուսակցական մամուլում՝ մատնանշելով վտարման պատճառները, ինչպես նաև հրապարակում է սխալ կերպով վտարվածներին վերականգնելու մասին:

11. Կուսակցութեանից վտարելու կամ վտարվածին կուսակցութեան անդամի իրավունքներում վերականգնելու հարցի լուծման ժամանակ պետք է ապահովված լինի առավելագոյն զգուշութեանն ու ընկերական հոգատարութեանը և կուսակցութեան անդամին ներկայացված մեղադրանքների հիմնավորվածութեան ուշի-ուշով քննումը:

Մանր դանցանքների համար (ժողովին չներկայանալը, անդամավճարները ժամանակին չմուծելը և այլն) պետք է կիրառվեն կուսակցական դատարարակութեան ու ներդոժման կանոնադրութեամբ նախատեսված միջոցները, և վոչ

թե կուսակցությունից վտարելը, վորը կուսակցական պատ-
ժի առաւելագույն չափն է հանդիսանում:

12. Կուսակցությունից վտարվածների ապելացիաները
պետք է կուսակցական համապատասխան որդանների կող-
մից քննության առնվեն վոչ ուշ, քան յերկշաբաթյա ժամ-
կետում՝ դրանք ստացվելու որվանից:

II

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

13. Կուսակցության մեջ մտնել ցանկացող բոլոր ան-
ձերն անցնում են թեկնածուական ստաժ, վորն անհրա-
ժեշտ է նրա համար, վորպեսզի թեկնածուն ծանոթանա
կուսակցության ծրագրին, կանոնադրությանը, տակտիկա-
յին և կուսկազմակերպության համար ապահովվի թեկնա-
ծուի անձնական հատկությունների ստուգումը:

14. Թեկնածու ընդունելու կարգը (անհատական ընդու-
նելություն, յերաշխավորություններ ներկայացնելն ու
դրանց ստուգումը, սկզբնական կազմակերպության վորո-
շումը՝ ընդունելության մասին և նրա հաստատումը) մի-
անգամայն նույնն է, ինչ վոր կուսակցության անգամ ըն-
դունելիս:

15. Թեկնածուական ստաժը սահմանվում է մեկ տարի
ժամկետով:

16. Կուսակցության անդամության թեկնածուները
խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են այն
կազմակերպության ժողովներին, վորին նրանք պատկա-
նում են:

17. Կուսակցության անդամության թեկնածուները մու-
ծում են սովորական անդամավճար՝ տեղական կուսակցա-
կան կոմիտեի դրամարկղը:

III

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՍՈՒՐԱՏԻԱ

18. Կուսակցության կազմակերպական կառուցվածքի
ղեկավարող սկզբունքն է հանդիսանում՝ դեմոկրատական
ցենտրալիզմը, վորը նշանակում է.

ա) կուսակցության բոլոր ղեկավար որդանների ընտ-
րականություն՝ ներքևից մինչև վերև.

բ) կուսակցական որդանների պարբերական հաշվե-
տվություն իրենց կուսակցական կազմակերպությունների
առջև.

գ) կուսակցական խիստ կարգապահություն և փոքրա-
մասնության յենթարկվելը մեծամասնությանը.

դ) վերադատ որդանների վորոշումների անալոյման
պարտադիր լինելը ստորադատ որդանների համար:

19. Կուսակցությանը կառուցվում է ըստ տերիտորիալ-
արտադրական հատկանիշի. վորևե չրջան սպասարկող կու-
սակցական կազմակերպություն վերադատ է համարվում
տվյալ չրջանի մասերն սպասարկող բոլոր կուսակցական
կազմակերպությունների նկատմամբ, կամ աշխատանքի ամ-
բողջ ճյուղն սպասարկող կուսակցական կազմակերպությու-
նը վերադատ է համարվում աշխատանքի տվյալ ճյուղի մա-
սերն սպասարկող բոլոր կուսակցական կազմակերպությու-
նների նկատմամբ:

20. Բոլոր կուսակցական կազմակերպություններն ավ-
տոնոմ են տեղական հարցերի լուծման մեջ, վորչափով այդ
վորոշումները չեն հակասում կուսակցության վորոշում-
ներին:

21. Շուրջանչյուր կուսակցական կազմակերպության
բարձրագույն ղեկավար որդանն է հանդիսանում ընդհանուր
ժողովը (սկզբնական կազմակերպությունների համար),
կոնֆերենցիան (որինակ՝ չրջանային, մարզային կազմակեր-
պությունների համար), համագումարը (Միութենական
հանրապետությունները կոմկուսակցությունների համար,
ՀամԿ(բ)ի-ի համար):

22. Ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համա-
գումարն ընտրում են բյուրո կամ կոմիտե, վորոնք նրանց
գործադիր որդաններն են հանդիսանում և ղեկավարում են
կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը:

23. Կուսակցական որդանների ընտրությունների ժա-
մանակ արգելվում է ցուցակով քվեարկությունը: Քվե-
արկությունը պետք է կատարվի ըստ առանձին թեկնածու-
թյունների, ըստվորում կուսակցության բոլոր անդամների

համար աստիճանովում և թեկնածուների բացարկման և վերջիններիս քննադատելու անսահմանափակ իրավունք: Ընտրությունները կատարվում են թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկությամբ:

